

ОКТЯБРЬ-ДЕКАБРЬ № 10-12 (150-152) 2011 г.

Հայի համբերության թասը

Քչերը գիտեն, թե ինչ է նշանակում վեր խոյացած Քուռկիկ Ջալալիի սմբակների տակ դրված մետաղյա թասը, որից թափվող ջուրն էլ լցնում է ավազանը:

Դա հայի համբերության թասն է. հայը դիմում է հարձակման միայն այն դեպքում, երբ համբերության թասը լցված է և արդեն թափվում է:

ՆԱՀԱՊԵՏ – ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ


ՀԱՅԿԻՑ ՍԵՐՎԱԾ ՑԵՂԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՆՐԱՆՑԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՆՉ ԳՈՐԾԵՑ

Այս է Հայկը, որ հայ ազգի նախնին, որ Թորգոմի որդին էր, սա՝ Թիրասի, սա՝ Գամերի, սա՝ Հաբեթի, եւ այս են նրա ցեղերն ու սերունդները եւ նրանց բնակության աշխարհը: Այնուհետեւ, ասում է (Մար Աբասը), նրանք սկսեցին բազմանալ եւ երկիրը լցնել:


ՀԱՅԿ

Բելին հաղթելուց հետո Հայկը դառնում է իր բնակության տեղը, իր Կադմոս թոռին շատ բան է պարգևում պատերազմի ավարից և անվանի մարդիկ՝ իր ընդոծիններից: Նրան հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը գնում դադարում է Հարք կոչված դաշտում:

Հայկը տարիներ ապրելով՝ Արամանյակին ծնավ Բաբելոնում, դրանից հետո դարձյալ ոչ քիչ տարիներ ապրելով՝ մեռնում է, ամբողջ ազգը հանձնելով իր Արամանյակ որդուն...
Արամանյակը բոլոր բազմությունն առնելով չվում է դեպի հյուսիսային արևելք և գնում իջնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված... Արեգակնաձեմ լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել էր երկրից: Իսկապես մի ծերունի լեռ՝ երիտասարդացած լեռների մեջ: Արամանյակն այս խոր դաշտում բնակելով՝ շենացնում էր մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը, նույն կողմում, լեռն իր անվան հարմարեցնելով կոչում է Արագած, իսկ կալվածը՝ ոտն Արագածո (Արագածի ստորոտ):


ԱՐԱՄԱՆՅԱԿ

Արամանյակը տարիներ ապրելուց հետո ծնավ Արամայիսին... Նրա որդին՝ Արամայիսը, իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով կոչում է Արմավիր, իսկ գետը կոչում է Երասխ՝ իր թոռան Երաստի անունով: Իսկ իր որդուն, բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ աղխով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. Նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ:


ԱՐԱՄԱՅԻՍ

Այս Արամայիսը տարիներ ապրելով՝ ծնավ Ամասիային... Ամասիան Արմավիրում բնակվելով տարիներ անցնելուց հետո ծնում է Գեղամին և Գեղամից հետո արի Փառոխին և Ցոլակին: Սրանց ծնելուց հետո գետն անցնում է, մոտենում է հարավային լեռան: Այստեղ, լեռան ստորոտում, խորշերում, խոշոր ծախսերով շինում է երկու տուն, մեկը դեպի արևելք, լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների մոտ, իսկ մյուսը՝ այդ տնից դեպի արևմուտք, նրանից հեռու՝ հետևակ մարդու կես օրվա ճանապարհով երկար օրում: Այս տները նա տվեց ժառանգություն իր երկու որդիներին՝ արի Փառոխին և կայտառ Ցոլակին, որոնք այնտեղ բնակվելով՝ իրենց անունով կոչեցին այդ տեղերը, Փառոխից՝ Փառախոտ և Ցոլակից՝ Ցոլակերտ: Իսկ լեռը Ամասիան իր անունով կոչեց Մասիս և հետո նորից Արմավիր դառնալով՝ կարճ տարիներ ապրեց և մեռավ:


ԱՄԱՍԻԱ

Իսկ Գեղամը տարիներ անցնելուց հետո Արմավիրում ծնավ Հարմային. նա Հարմային թողեց Արմավիրում բնակվելու իր որդիների հետ, իսկ ինքը գնաց արևելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետևի կողմը, մի ծովակի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները՝ Գեղարքունիքի, ինչպես կոչվում է նաև ծովը: Իսկ ինքը Գեղամը նորից դառնում է հիշյալ դաշտը և նույն լեռան ստորոտում, մի ամուր ձորակում շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամի, որ հետո նրա թոռան Գառնիկի անունով կոչվեց Գառնի:


441-2012


ԳԵՂԱՄ

Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեգ ու թիկնավետ, վայելչակազմ, կորովախոս գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ մարդիկ իբրև ծառա և նրա ժառանգության սահման է կտրում ծովից դեպի արևելք մինչև մի դաշտ, որտեղ Երասխը, սեպացած լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով, ահագին շառաչյունով թափվում է դաշտը: Սիսակն այստեղ բնակվելով իր բնակության սահմանները լցնում է շինություններով և աշխարհը իր անունով կոչում է Սյունիք, բայց պարսիկներն ավելի ճիշտ կոչում են Սիսական:


ՍԻՍԱԿ

Այս Գեղամը, ինչպես ասացինք, տարիներ ապրելով ծնավ Հարմային, որից հետո էլի ապրելով մեռավ և իր որդուն՝ Հարմային հրամայեց Արմավիրում բնակվել: Հարման տարիներ ապրելով ծնավ Արամին:
Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ:


ԱՐԱՄ

ԴԱՍԱԿԱՆ ԷՋԵՐ. ՐԱՖՖԻ

Ի՞ՆՉ Է ԽԱՉԱԳՈՂԸ

Թողնել ընտանիքը անտեր, երկար ու ձիգ տարիներ թափառել աշխարհի մի ծայրից դեպի մյուսը, արծաթ որսալու համար չխնայել ամեն տեսակ անազնիվ միջոցներ, - այդ խաչագողի գործն է:

Խաչագողն ունի յուր արհեստին վերաբերյալ բոլոր հմտությունները: Այլ և այլ երկըրներում թափառելու համար նա գիտե զանազան ազգերի լեզուներ, ծանոթ է նրանց սովորություններին, և ինչ ազգի մեջ որ մըտնում է, խոսում է այնքան վարժ, որ դժվար է որոշել, թե նա այն ազգին չի պատկանում: Նա յուր ընկերների հետ խոսում է մի առանձին լեզվով, որը ոչ ոք հասկանալ կարող չէ, եթե խաչագողների հասարակությանը չէ պատկանում: Դա մի խորհրդավոր, պայմանական լեզու է. դա ավազակների արգոն է:

Շատ անգամ խաչագողը չէ խոսում, բայց միտք է հայտնում: Նրա աչքերի, հոնքերի, շրթունքի, երեսի, ձեռքերի, մի խոսքով, մարմնի զանազան մասերի այս և այն ձևով շարժմունքը հայտնում են ամբողջ նախադասություններ, որոնց նշանակությունը հասկանում է միայն խաչագողը: Միմիկան նրանց դեմքի վրա սաստիկ զարգացած է: Կապկի նման կարողանում են նրանք շարժեցնել երեսի այն մասերը, որոնք ուրիշների մոտ անշարժ են: Ես տեսա մի խաչագող, որ ավանակի նման շարժեցնում էր իր ականջները: Մի այլը յուր քիթը զարմանալի կերպով ծռմռում էր այս և այն կողմ: Խաչագողը խաչագողի ձեռքը բռնելով, առանց մի բառ արտասանելու, հայտնում է յուր միտքը:

Հարկը պահանջած ժամանակ խաչագողը միայն անորոշ ձայներ է արձակում, կամ թռչունների ու գազանների բարբառով ազդարարություններ է կարդում: Այդ նրանց գիշերային լեզուն է, մանավանդ այն ժամանակ, երբ մինը մյուսից հեռու է գտնվում: Նրանք բոլոր նշանախոսությունները այն աստիճան ճշտությամբ պայմանավորված են իրանց մեջ, որ երբեք չեն վրիպում նպատակից:

Կերպարանափոխության մեջ խաչագողը սատանայական հնագիտություն ունի: Ծրպտիլ, այլակերպվիլ այնպես, որ բոլորովին ուրիշ մարդ երևալ, դրանք նրա համար այնպիսի խաղեր են, որոնց մեջ ոչ ոք կարող է նրա հետ մրցություն անել: Խաչագողին չէ կարելի տեսնել յուր բուն պատկերի մեջ. այլ և այլ երկրներում, գործի և հանգամանքների համեմատ, նա միշտ նոր ձև և նոր կերպարանք է ընդունում:

Խաչագողը բովանդակում է յուր մեջ մարդկային ամբողջ հասարակության բնավորությունները: Նա ընկերային կյանքի ամեն ելևէջների վրա զարմանալի ճարպկությամբ բարձրանում և իջնում է: Նա հասարակության բոլոր ծալքերի մեջ մտնում և դուրս է գալիս: Հարմարվելու անհամեմատ ընդունակություն ունի: Ժողովրդի բարձր դասի հետ նա մի հպարտ, փառասեր, թեթևամիտ, պերճախոս ազնվական է, ազնվականի բոլոր փայլով: Ժողովրդի ստոր դասի հետ, նա մի բարի, միամիտ և անկիրթ ռամիկ է, բոլոր ռամկական պարզություններով: Գիտնականի հետ նա մի գեղախոս հռետորի նման վիճում է, ամեն առարկայի վրա դատում է և հանրամարդկային բարձր ու վսեմ գաղափարներ է հայտնում:

Մոլլաների հետ նա խավարամիտ է, որպես գիշեր և մոլեռանդ, որպես հնդկական ֆագիր: Խաչագողը մի օր լույս է, մյուս օր խավար: Մի օր բարի է, մի օր չար:

Խաչագողը մի գարշելի տիպ է: Նա ավերված, փչացած, անբարոյականացված հասարակության հրեշավոր ծնունդն է: Նա նեխած ջրի մրուրն է:

Երբեմն նա փողոցային սրիկա է. գիշերի մթության մեջ հանդիպող մենավոր անցորդը հազիվ կարող է ազատվել նրա ճանկերից: Ցերեկով նա բարեպաշտ, երկյուղած քրիստոնյա է և պատահած աղքատին ողորմության ձեռք է մեկնում: Մի տեղ, ամենակեղտոտ գինետան ստորերկրյա նկուղների մեջ, կառապանների հետ նըստած, հարբեցողությամբ է անցկացնում: Այդ ժամանակ նա մոլի ստահակ է: Մի այլ տեղ, ամենափառավոր հյուրանոցում նա խիստ նուրբ ճաշակ ունի կերակուրների և ըմպելիքների ընտրության մեջ: Այդ ժամանակ նա բարեկյաց քաղաքացի է:

Խաչագողը չափազանց առաձգական է և դյուրաթեք: Նա դեպի ամեն կողմ ծռվում է: Նա ամեն կաղապարի մեջ մտնում է և ամեն տեսակ ձևեր ընդունում է, բայց երբեք մի հատկանիշ ձև չէ պահպանում: Նա կատարյալ քամելեոն է: Նա այն առասպելական էակներից է, որ ամեն մի անգամին մի այլ տեսակ են երևում:

Խաչագողը գիտե կեղծել, գիտե խաբել, գիտե ձեռքից սպրդիլ և աներևույթ լինել: Ոստիկանի ամենատես աչքերը չեն կարող նորա հետքերը հետազոտել: Նա անհայտանում է որպես դև, և հայտնվում է որպես հրեշտակ: Բայց երբ որ բախտը դավաճանում է նրան, - բանտը յուր պապենական օթևանն է: Շղթաներից երկյուղ չէ կրում նա, իսկ դահիճի առջև արհամարհանքով է խոնարհեցնում յուր պարանոցը:

Խաչագողը նայում է տիեզերքի վրա, որպես յուր հունձքի արտի վրա: Նա գիտե կորզել մարդկային ընդհանուր աշխատանքից ինչ որ իրան պետք է: Նա չէ ցանում, բայց հնձում է: Նա չէ արդյունաբերում, բայց սպառում է: Նա ապրում է ուրիշի վաստակով: Իսկ այդ նպատակին հասնելու համար, գործ է դնում յուր հնարագիտության ամենակարող հմտությունները: Ուր չէ հաջողվում նրան խաբուսիկ միջոցներով որսալ, այսպիսի դեպքերում պատրաստ է նրա արյունահեղ ձեռքը...:

Խաչագողը ամեն բան ունի, բայց ոչինչ չունի: Նա նմանում է այն գիշակեր մեծ գազանին, որ խորտակում է մի ամբողջ ցուլի մեջքը, լերդը ուտում է, արյունը խմում է, իսկ մնացածը թողնում և հեռանում է: Այնուհետև օրերով մնում է սոված, երբ ուրիշ որս գտնել չի կարողանում: Խաչագողը մի օր կուշտ է, մյուս օր քաղցած: Մի օր հարուստ է, մի օր աղքատ:

Ես նկատեցի խաչագողի մի քանի ընդհանուր գծերը միայն, իսկ մանրամասնությունները ընթերցողը կտեսնե նույն իսկ «Խաչագողի Հիշատակարանի» մեջ:

P.S. - Մեր օրերում ևս քիչ չեն նման մարդիկ:

ԱՆՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՏ

Տարօրինակ ցեղ ենք մենք, շատ տարօրինակ, աշխարհից վիրավորված՝ մեր ունեցածը կորցրել ենք ու վիրավորվել: Ումից եւ ինչու ենք վիրավորվել, չգիտեմ: Երբեւիցե մենք մեզ հարցրե՞լ ենք, թե ինչո՞ւ ենք կորցրել: Երբ որ այսօր եւ հազար տարի առաջ երազում ենք, փնտրում, պայքարում, որ վերադարձնենք մեր կորուստները: Եվ երբ գտնում ենք մեր երազանքն ու մեր կորցրածը՝ մեզ քիչ է թվում: Ողորմի հոգուդ, Պոլսում ապրող եւ ծորակներ ծախող բանաստեղծ Զահրատ, հազար ողորմի քեզ, երբ ասում էիր՝ կյանքը կիատնի, փնտրտուքը՝ ոչ, մարդը չգտնող կենդանի մըն է: Վստահ եմ, որ Զահրատը մարդ ասելով՝ առաջին հերթին հային նկատի ուներ:

Այո, զարմանալիորեն անհայտ աշխարհներ եղան աշխարհին հասկանալի, ուր ցեղովի ընդամենը յոթ գրաճանաչ ունեին, բայց մենք մնացինք չհասկացված: Եվ ինձ թվում է՝ մեղքը աշխարհինը չէ, մեղքը մերն է, մեղքը մեր ներսում է:

Զվարթնոց տաճարն ուներ երեսունվեց սյուն եւ կայուն էր երկրի վրա ու երկնքի դեմ, ինչպես մեր երկիրը հնում՝ Արտաշես արքայի ժամանակ, որ գլխին պահում էր սեփական պետության գմբեթը: Բայց ինչ եղավ հետո. տաճարի ինքնասիրահարված սյուներից մեկը, որին թվում էր, թե ինքը միակ ընտրյալն է, մտածեց՝ մյուսները թող պահեն իրենց գմբեթը, ես կարող եմ դուրս գալ ու իմ գմբեթը ստեղծել: Այդպես մտածեցին թերեւս էլի սյուներ, եւ Զվարթնոց հրաշալի տաճարը փլվեց: Սուտ է, որ երկրաշարժից է փլվել Զվարթնոցը: Մեր ցեղը բազում երկրաշարժեր է տեսել, բայց երբեք չի խոնարհվել, քանզի մեր տաճարները դրսից չէ՝ քանդվել են ներսից:

Եվ այսօր առաջնորդի զուգս հագածները չեն էլ մտածում, որ սարդոստայնի ընդամենը մի թելն են իրենք, իսկ սարդը նենգորեն լուռ է: Անշուշտ, երիցս ճիշտ է, որ ոչ մի կռունկ առանձին կամ երեքով հյուսիսային լճերի տեղը չգիտի, ինչպես նաեւ չգիտի Աֆրիկայի տեղը: Կռունկների կյանքի ճանապարհը միայն երամը գիտի:

Իսկ երամն ասում է. Դուք ձեր ավերակ տաճարներն ավելի եք սիրում, քան ձեր կանգուն տաճարները: Դուք ձեր կորցրածն ավելի եք սիրում, քան ձեր ունեցածը: Չէ՞ որ դուք կռունկ սիրող ժողովուրդ եք: Շարունակեք քանդել ձեր տաճարները ներսից եւ, կորցնելով ձեր հայրենիքը, հարցրեք մեզ՝ չվող թռչուններիս.

– Կռունկ, ո՞ւստի կուգաս, կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս: Այնինչ…

Այնինչ տեր եղեք, որ անտեր չմնաք, տեր եղեք, որ միշտ տեր ունենաք եւ ձեր իսկ տիրոջով տեր դառնաք ձեզ եւ ձեր երկրին ու հազարամյակների միջով անցած կորուստներին ու ունեցածին:

Եվ այլեւս մեզ մի դիմեք, մենք ընդամենը չվող թռչուններ ենք:

Մերուժան ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԵՄՔՈՎ ԴԵՊԻ ՀՈԳԵՎՈՐԸ

Արժեքները փոխվել են:

Այս միտքը հաճախ կարելի է լսել մասնավոր զրույցներում, ընկերական հավաքներում, պաշտոնական հանդիպումներում, մամուլում, հեռուստաեթերից, ռադիոյից... Ցավոք, այդպես է: Բայց արժեքներն ամենևին իրենք իրենց չեն փոխվում: Արժեքները մենք ենք փոխում բոլորով, երբ հոգու տարածքները նեղանում-փոքրանում են... կանաչ հրեշի` դոլարի, եվրոյի, խեղճ ու կրակ մեր դրամի առջև: Այդպես մեր մասնավոր զրույցները, ընկերական հավաքները, մամուլը, հեռուստաեթերը, ռադիոն լցվեցին... «աստղերով»` ստվերելով իսկական աստղերին:

Իսկական աստղերին մենք չէինք նկատում ու գուցեև դա իր արդարացումն ուներ: Քանի որ տարիներ առաջ իմ զրուցակցի` Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկ թատրոնի մեծանուն դերասան Ալեքսանդր Շագաֆյանի խոսքերով` ժամանակն է բերում ամեն ինչ և ժամանակն էլ տանում է...

Տարիների ծանրության տակ ասես փոքրացած`



Ալեքսանդր Շագաֆյան

քայլում էր Վանաձորի փողոցներում մենակ, անընկեր: Իսկ թափառիկ մտքերը երևի Յագոյի հետ էին ու ծանրութեթև էին անում կյանքի չարն ու բարին:

Ալեքսանդր Շագաֆյանն ապրել էր որբանոցային մանկության դառնությունը, անազատ կյանքի դժվարությունները և նրա համար անցած դարեվերջին հայրենիքի նվաճած անկախությունն ուրիշ իմաստ ուներ: Քսան տարի առաջ անկախության արշալույսին Ալեքսանդր Շագաֆյանի արտահայտած միտքը անկախության, հոգու, մարդկային բերկրանքի, հույսի ու հավատի, ինչպես նաև թատրոնի ու մարդու, չարի ու բարու մասին ավելի քան արդիական է, որի համար էլ 1991 թ. քաղաքային «Վերածնունդ» թերթում իմ հարցազրույցը Ալեքսանդր Շագաֆյանի հետ այսօր հրապարակված տեսնելու ցանկությունը կարծում եմ պետք է հասկանալի լինի ընթերցողին:

Իսկ թե ինչո՞ւ է ընտրված ներածականի վերոնշյալ սկիզբը, պարզից էլ պարզ է` հոգևորն իր իսկական գնահատանքին պիտի արժանանա:

«ՓԱՌՔ ԵՐԿՆԱՎՈՐԻՆ, ՏԵՍԱ ԵՎ... ԳՆՈՒՄ ԵՄ»

Թատրոնը և մարդը. այս զուգորդումն ակամա ծնվում է իմ հոգում ամեն անգամ, երբ հանդիպում եմ նրան փողոցում` մտքով ծանրաբեռ քայլելիս:

Թատրոնը` Հովհ. Աբելյանի անվան, և մարդը` Ալեքսանդր Շագաֆյանը. ասես անկեղծ մտերիմ ընկերներ են եղել, որոնք չեն ցուցադրել և ցուցադրում, թե ինչն է իրենց միացրել, բայց իրար համար արել են այն, ինչ կարողացել են: Այդպես 60 տարի:

Պատկառելի ժամանակամիջոց բազում հիշողություններով, որոնց շուրջն էլ զրուցելու ակնկալությամբ հանդիպեցի նրան:

- Սիրելի՛ վարպետ, կա սրտի օրենք, որը բնության, իրականության օրենքից երբեմն վեր է և թույլ է տալիս հուսալ, որ թատրոնը երևի թախծում է առանց Շագաֆյանի: Իսկ Շագաֆյա՞նը...

- Ժամանակն է բերում ամեն ինչ և ժամանակն էլ տանում է: Արվեստը եղել է իմ իդեալը, որին նվիրաբերվեցի երկյուղածորեն: Այն ինձ տվեց կյանքը ճանաչելու բանալին:

Կոլխոզնիկ Մուկուչից սկսած, որը կերպավորել եմ 1928-ին լենինականյան բեմում, մինչև վերջին դերը` պարուսույցը Աղասի Այվազյանի «Դիպլիպիտոյում», ինձ սովորեցրին ճանաչել աշխարհի չարն ու բարին: Այդ ճանաչողության շնորհիվ էլ հասունացա, ստացածս վերադարձրի, վայելեցի մեր քաղաքի բնակչության հարգանքն ու պատիվը: Սա իմ ամենամեծ պարգևն է, գնահատականը: Դե, ամեն մի շահ իր հերթին ենթադրում է նաև կորուստ: Կորցրի տարիներս, բայց կորցրի առանց սրտի ցավի: Որովհետև, կրկնեմ, ամեն անգամ վարագույրն իջնելուց առաջ և հետո ինձ ուղեկցեց հանդիսատեսի ծափահարությունը: Արվեստում ոչինչ չեմ կորցրել: Կյանքիս իններորդ տասնամյակն է կիսվում, ուրեմն բնական է հեռանալս բեմից, թեև կորստի ցավը շատ հեշտ չէ խեղդել: Եվ հետո, շնորհակալ եմ, մեկ-մեկ հիշում են ինձ ու հրավիրում են «Դիպիլիպիտոյում» խաղալու: Կարոտս առնելու մի այլ հնարավորություն ևս օգտագործեցի. թատերական կյանքիս հիշողությունները թղթին հանձնեցի «Թատրոնի պատմություն» գրքում, որտեղ իմ հանդիսատեսն ու ընթերցողը ինձնից բացի կհանդիպի Հովհաննես Աբելյանին, Գեղամ Նալբանդյանին, Աղավնի Հովհաննիսյանին, Ադրիկ Սարգսյանին, Արուս Խուդանյանին, մեր բեմի մյուս երախտավորներին, որոնց հետ խաղալու բախտն ունեցա:

- Վարպետ, ասում են, թե անցած տասնամյակներում խաղացել եք 250 դեր. Յագո` «Օթելլոյում», Ֆրանց` «Ավազակներում», Դարչո` «Պեպոյում», Բալաբեկ` «Փորձադաշտում»... Հնարավոր չէ բոլորը թվել: Ձեր կերպարները հանդիսատեսի հետ շփվել են ոչ թե բարի խոսքով ու ծիծաղով, այլ կեղծիքով, երեսպաշտությամբ, տառապանք պատճառելով: Նրանք եղել են արգահատելի և միշտ դեմքով շրջվել են բարուց: Դրանք չարի կրողներն են եղել: 60 տարի, ահա, չարի շապիկի մեջ, և, այնուամենայնիվ, դրանից դուք ոչ թե մելամաղձոտ, այլ երևի թե ավելի բարի եք դարձել...

- Բացասական դերը օգնում է թափանցելու մարդկային հոգու գաղտնարանները և դերասանի վարպետության բարձրացման լավագույն դպրոցն է: Միաժամանակ պայմաններ է ստեղծում, որ դրական հերոսը առավել լիարժեք դրսևորվի: Այդպիսին է Յագոն, առանց որի Օթելլոն Օթելլո չէր դառնա: Թող անհամեստ չհնչի, բայց գուցեև դրա համար Փափազյանը բարձր գնահատեց իմ Յագոյին, երբ ասաց, որ Շագաֆյանի Յագոն մեկն է իր 85 Յագոներից, որը շատ ճկուն, շատ հաջողակ և լավագույն Յագոներից է... Ամեն անգամ փորձել եմ նորովի, ավելի խոր մեկնաբանել Յագոյին, սակայն ամեն անգամ էլ ընդգծելով հիմնականը` Յագոն բնությունից վատատես է, նրա մեջ նստած է չարության սաղմը: Այդպիսին է նա` այդ հրեշավոր սրիկան: Պատահական չէ, որ երբ նրանից ջանում են իմանալ կատարած եղեռնագործության պատճառը, Յագոն պատասխանում է. «Ոչինչ մի՛ հարցնեք, ինչ գիտեք, գիտեք...»:

Չարությունը Յագոյի (նույնը նաև մյուս բացասական կերպարների) համար բնական վիճակ է: Նա հավատացած է իր իրավացիության մեջ և սա է ողջ դժբախտությունը:

- Այնուամենայնիվ հնարավոր չէ, որ բոլոր դերերը հավասարապես ուժեղ խաղայիք:

- Անշուշտ: «Ռուսական հարց» պիես կար` ծամծմված թեմայով: Մի կողմում կոմունիստներն էին, մյուս կողմում` ֆաշիստները: Ինձ հանձնարարված էր կոմունիստ քաղղեկի դերը, որն այդպես էլ չկարողացա խաղալ: Կոմունիստի դերը անգամ բեմում պարզապես չնստեց հոգուս մեջ, որի համար այսօր ուրախ եմ:

Քանի որ առիթը եկել է` ասեմ. ազատ, ինքնիշխան ապրեցի և ոչ մի կուսակցության մեջ չմտա: Կյանքից լավատեղյակ մեկը կհիշեցնի, թե որբանոցում սկաուտ եմ եղել: Չեմ թաքցնի. դա իմ հպարտությունն է եղել: Այն օգնեց, որ հայրենասիրությունը խոր արմատներ ձգի որբերիս հոգում: Ճակատագրի հեգնանքով կորցրել էինք մեր հայրենիքը: Հիմա, փառք երկնավորին, Հայաստանն անկախ է: Սա գալիք սերունդի համար բերկրանքի, հույսի ու հավատի, ազատ ու երջանիկ ապրելու իրավունք ու երաշխիք է: Ես երկար ապրել ու երջանիկ եմ, որ հայրենիքս վերջապես անկախ տեսա... ու խաղաղ հոգով գնում եմ...

- Չարժե շտապել, վարպետ, քանզի մարդու կյանքը տնօրինում են ոչ միայն ժամանակը, այլև ճակատագիրը: Այսօր, ուզենք թե չուզենք, կան երիտասարդներ, որոնք ինքնասիրահարված լինելու պատճառով կաթվածահար ծերունիներ են հիշեցնում:

Փառք տանք Աստծուն, որ կան Ձեր նման մարդիկ, որոնք ծանրաբեռ, հուշիկ, հանդարտ քայլվածքով, երբեմն էլ մի բաժակ սուրճի առջև խորիմաստ` երկրպագուներով շրջապատված, զարդարում են մեր քաղաքը: Դուք դեռ պետք ու հարկավոր եք մեր քաղաքին:

Ուրեմն` բարին ընդ Ձեզ:

Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*«**ՎԵՐԱԾՆՈՒՆԴ**», 1991թ., սեպտեմբերի 20*

Սիրո ուժը Հայաստանից

Դիանա Քալաշովան հիացրեց չեխ եւ սլովակ հեռուստադիտողներին

Չեխիայում և Սլովակիայում անցկացվող «Չեխիան և Սլովակիան ունի տաղանդ 2» հեռուստաշոուի առաջին փուլում, երբ անցկացվում էր մասնակիցների ընտրությունը, փայլուն հանդես եկավ իննամյա Դիանա Քալաշովան, ով ոչ միայն անցավ հաջորդ փուլ, այլև ժյուրիի նախագահ, հայտնի չեխ երգչուհի Լուցիե Բիլայից ստացավ հիացական գնահատականներ: Փոքրիկ Դիանան, ով իր ելույթի ավարտին բեմ հրավիրեց նաև ծնողներին, իր ձայնով զարմացրեց ու գերեց բոլորին: Ժյուրիի անդամները և ողջ դահլիճը հոտնկայս ծափահարում էին հայազգի փոքրիկ երգչուհուն: Նա անգլերենով կատարեց Ջենիֆեր Ռաշի «Սիրո ուժը» երգը: Դիանան չեխերենով պատասխանելով ժյուրիի անդամների հարցերին, նշեց, որ ինքը ծագումով Հայաստանից է և դպրոցում սովորում է միայն ամենաբարձր գնահատականներով: Լուցիե Բիլան բարձրացավ բեմ, կանգնեց երգչուհու կողքին և համբուրելով նրան ասաց, որ թե նախկինում, թե հիմա և թե ապագայում




դժվար թե իրենց շոուն նման տաղանդ տեսնի և ինքը երջանիկ է, որ նրա առաջին ելույթին ներկա է: Երգչուհին նաև առաջարկեց Դիանային ապագայում իր հետ երգել և նրանից ստացավ դրական պատասխան: Բիլան նաև նշեց, որ իսկական երգչի համար Դիանան ամեն ինչ ունի՝ գեղեցկություն, համեստություն, ձայն և իհարկե, հիանալի ծնողներ: Ժյուրիի սլովակ անդամ Յարոսլավ Սլավիկը Դիանային համարելով նոր աստղ և տաղանդ, հիշեց հայկական արմատներ ունեցող ամերիկահայ երգչուհի Շերին, ընդգծեց նրանց գենետիկ կապը, և հաստատեց, որ Դիանան էլ Ջենիֆերի նման փայլուն կատարեց այդ երգը:

Առջևում դեռ մրցույթի հաջորդ փուլերն են, իսկ վերջում նաև կլինի հեռուստադիտողների քվեարկություն, իսկ չեխական թերթերն արդեն գրել են, որ Բռնո քաղաքում տեղի ունեցած մրցույթի առաջին փուլում Բիլան արդեն ընտրել է իր ֆավորիտին: Դիանան ծնվել է 2002-ին ռուսական Նովոկուզնեցկ քաղաքում, իսկ 2003 թվականից ապրում են Պրահայում: Մասնակցել է բազմաթիվ մրցույթների, իսկ այս տարի նաև Ղրիմում անցկացված «Նոր ալիք» երգի փառատոնին, ուր հասել է մինչև եզրափակիչ:

«ՕՐԵՐ» եվրոպական ամսագիր, Պրահա

ՀԱՅԵՐԸ ՄՈՌԱՑԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՆՑՅԱԼԸ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԷԻՆ ԴԵՌ 1500 ՏԱՐԻ ԱՌԱՋ



Վերջին տարիներին մոդայիկ է դարձել Հայաստանում եվրոպական արժեքներ քարոզելը: Մինչդեռ, փորձը ցույց է տալիս, որ դրանց քարոզիչները պարզապես տեղյակ չեն սեփական ժողովրդի քաղաքական և իրավական ժառանգությանը: Նախապես ասենք, որ «եվրոպական քաղաքակրթական համակարգ» կոչվածի հիմքում ընկած են մի քանի սկզբունքներ՝ ինդիվիդուալիզմը, մարդու իրավունքների գերակայությունը, իշխանությունների տարանջատումը, քաղաքացիական հասարակության առկայությունը և այլն:

Հայացք նետենք մեր ժողովրդի պետության և իրավունքի պատմությանը:

Դեռևս 1500 տարի առաջ՝ 500-ականների սկզբին, Արցախի և Ուտիքի թագավոր Վաչագան Բարեպաշտի նախաձեռնությամբ ընդունվում է Սահմանադրություն, որի՝ 1288 թվականին արտագրված տարբերակը մինչ այժմ պահվում է Մատենադարանում (տե՛ս լուսանկարը): Սկզբնական շրջանում Սահմանադրության նախագիծն ուղարկվում է տարբեր բնակավայրեր, որտեղ հավաքներ և քննարկումներ են անցկացվում, բնակչությունն իր համաձայնությունն է տալիս, որից հետո թագավորը գումարում է համապետական մեծ համագումար և նոր միայն հանրաքվեով ընդունում Սահմանադրությունը: Ընդ որում, համագումարը վարում էր մի շարքային զինվոր: Այս մոտեցումները 800-1000 տարի անց միայն երևան եկան Եվրոպայում:

Հայկական առաջին Սահմանադրության առկայությունը և կարևորությունը, ցավոք սրտի, դեռևս համարժեքորեն չի ընկալվում մեր հասարակության կողմից: Այդ բացը լրացնելու նպատակով անցյալ տարի հրատարակվեց «1500-ամյա իրավակարգի ակունքներն Արցախում» գիրքը՝ երեք լեզուներով:

Այժմ գործարարներ Արմեն Դավթյանի և Մովսես Զավարյանի նախաձեռնությամբ Ստեփանակերտում կանգնեցվելու է Վաչագան Բարեպաշտի արձանը: Արձանի էսկիզային տարբերակն արդեն պատրաստ է, իսկ բացումը նախատեսվում է հաջորդ տարի:

Հայկական առաջին Սահմանադրությունն ամենավառ վկայությունն է այն բանի, որ եթե մեր պետականության բնականոն զարգացումը 600-700 տարով չընդհատվեր, գուցե ինքներս լինեինք լոկոմոտիվն այն արժեքների, որոնք այսօր ընկած են արևմտյան ժողովրդավարության հիմքում...

ԳԱՂԹԵԼԻՍ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՐԿՈՒ ԿՈՂՄՈՒՄ ՑՈՐԵՆ ԵՆ ՑԱՆՈՒՄ

Հայ ազգի անվանադիր Հայկի հայր Թորգոմը մի կռվի ժամանակ պարտվում է: Թշնամին գերում է Թորգոմին ու նրա տոհմը և քշում, հեռացնում բնօրրանից: Հայրենի եզերքներից հեռանալիս Թորգոմը ճանապարհի աջ ու ձախ կողմերում տեղ-տեղ ցորեն է շաղ տալիս:

Մի քանի ամիս անց թշնամին արձակում է Թորգոմին ու նրա մարդկանց՝ համոզված լինելով, որ նրանք կմոլորվեն ճանապարհին և չեն կարող վերադառնալ տուն: Բայց հենց այդ ժամանակ աճել ու հասկակալել էին Թորգոմի շաղ տված սերմերը: Եվ թորգոմազուններն այդ ուղեցույց հասկերով վերադառնում են տուն:


Այդ ժամանակվանից հայերը իրենց գաղթի ճամփաների աջ ու ձախ կողմերում ցորեն են շաղ տվել՝ հուսալով, թե մի օր տուն պիտի վերադառնան: Շատ ամառներ ու աշուններ են անցել, տուն կանչող ճամփաների հասկերը կծղել են, թափվել գետնին, վայրենացել: Հիմա էլ հայկական վայրի հասկերը կանչում են իրենց տերերին:

Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԾ, ԲԱՅՑ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԱՆՈՒՆ

Պայքար ոչ պատերազմի դաշտում

Երբ Ղարաբաղյան պատերազմը սկսվեց, և մարտի դաշտ գնալու հարցը բարձրացավ, համալսարանի մի խումբ դասախոսներ, որոնց շարքում էր քիմիկոս Հելբիկ Հակոբյանը, դիմումներ գրեցին պատերազմ գնալու համար: Սակայն նրանց մերժեցին. դեռ ժամանակը չէր:



Ձախից երկրորդը Հելբիկ Հակոբյանն է

Հայաստանում առաջին անգամ սինթեզվեց իրթիռային վառելանյութ

Եվ սկսվեց մեկ այլ պատերազմ, բայց ոչ մարտի դաշտում: Արցախյան պատերազմի սկզբում հայ զինվորները չունեին հաղթանակի ամենակարևոր բաղադրիչներից մեկը՝ զենքը: Զինամթերքի ներկրում հնարավոր չէր իրականացնել, և սկսվեց զինամթերքի տեղական արտադրություն:

Պատերազմի տարիներին Մոսկվայում այրման պրոցեսների հետազոտման լաբորատորիայի ղեկավար Հովհաննես Դավթյանի աջակցությամբ պետական համալսարանի քիմիական ֆակուլտետում ստեղծվեց լաբորատորիա, որի ղեկավարն էր քիմիայի ամբիոնի դասախոս, գիտաշխատող Հելբիկ Հակոբյանը:

Այդ քիմիական լաբորատորիայում Հայաստանում առաջին անգամ սինթեզվեց հրթիռային վառելանյութ, որը կառավարվող հրթիռի ստեղծման նախապայմանն է: Հելբիկ Հակոբյանի ղեկավարած լաբորատորիայում զինամթերքի տարբեր տեսակներ էին պատրաստվում: Ստեղծվեց անծուխ այրում ապահովող նյութ, որը տեղադրվում էր ծխախոտի տուփի չափ արկղիկի մեջ: Այրվելով ամբողջ գիշեր՝ արկղիկը չէր թողնում զինվորներին մրսել:

Պետական ազգային անվտանգությունը (ՊԱԿ) ամեն կերպ խանգարում էր, և այդ ամենը կատարվում էր հնարավորինս գաղտնի:

Լաբորատորիայում երկար ժամանակ չարչարվեցին, որպեսզի ստեղծեն գերհզոր ռումբ, սակայն դրա համար պետք էր մաքուր բենզին: Ճակատագրի քմահաճույք. նման բենզին կարելի էր ճարել միայն Ադրբեջանից, այդ իսկ պատճառով հնարավոր չեղավ ստեղծել այդ ռումբը:

«Այդ ժամանակ չի եղել մի դեպք, երբ որևէ գործարանի դիմենք ինչ-որ հարցով և մերժում ստանանք: Զինամթերքի տարբեր մասեր տարբեր գործարաններում էին արտադրվում: Հրթիռների կորպուսներ, պայթուցիկներ ենք պատվիրել, պատրաստել են առանց որևէ գումարի», - հիշում է ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի պրոֆեսոր Նորիկ Գալստյանը:

Նրա սիրտը հայրենասերի սիրտ էր

Արցախյան շարժումը, ամենօրյա միտինգները, Ղարաբաղյան պատերազմը... Հելբիկ Հակոբյանը խորապես ապրում էր այդ ամենը: Այդ ամենն էլ պատճառ դարձավ նրան, որ 1990 թ. նա սրտամկանային կաթված ստանա (ինֆարկտ), անգամ կլինիկական մահ տարավ:

«Մեր հանդիպումների ժամանակ մենք ավելի շատ քննարկում էինք երկրի քաղաքական իրավիճակը, ինչին կբերի այս շարժումը: Այն ժամանակ բոլորս ավելի լավ էինք պատկերացրել, քան հիմա ունենք: Միգուցե այն ժամանակ ավելի հեշտ է թվացել երկիր ստեղծելը... իրականում դա շատ բարդ է...», - հիշում է Հելբիկ Հակոբյանի ամենամոտ ընկերը, համակուրսեցի Սուրեն Խառատյանը:

«Բուռն մարդ էր, չէր վախենում իր մտքերը արտահայտել, համարձակ էր, ակտիվ էր, սրտամոտ էր, և ամեն ինչ շատ ապրումներ էր ունենում խորը, մանավանդ եթե հարցը վերաբերում էր հայրենիքին: Նրա սիրտը հայրենասերի սիրտ էր», - ասում է Ռոմիկ Հարությունյանը:

«Գոհարիկն իմ դեղն է»



Ընտանիքով

«Հելբիկը գաղտնապահ էր իր աշխատանքում: Ավելի շատ իր մահից հետո իմացանք, որ իր զենքն այդքան օգտակար է եղել պատերազմի՝ ժամանակ: Բայց իր ընտանիքին ինչ տվեց, ինքը գնաց, կորավ՝ մեզ միայնակ թողնելով: Ծանր տարիներն էին, երեք երեխաներին միայնակ մեծացրել եմ», - հիշում է այդ օրերը կինը՝ 59-ամյա Անահիտ Սահակյանը: Նա դիմել է տարբեր կառույցների, սակայն օգնեց միայն Եգիպտոսի հայ համայնքը, քանի որ մայրը եգիպտահայ է. Հայաստանը չօգնեց, Եգիպտոսն օգնության հասավ:

«Ես հորս մասին ավելի շատ իմացել եմ համալսարանում աշխատող դասախոսներից, իր՝ ընկերներից, քան մեր տնից», - ասում է Հելբիկ Հակոբյանի որդին՝ Արամը, որը հավաստում է. ԵՊՀ քիմիական ֆակուլտետի նկուղներում մինչև այժմ էլ հետքերը մնում են, որ պատերազմի տարիներին այդտեղ գաղտնի լաբորատորիա է եղել:

Նրա երեք երեխաներից երկուսն ընտրել են հոր ուղին՝ քիմիկներ են: «Շատ հոգատար հայր էր. թեև դպրոցը մոտիկ էր, բայց միշտ մեքենայով գալիս էր դիմավորելու: Երաժշտական դպրոց էր տանում ժամերով սպասում, թե երբ կգամ, դասեր էր օգնում», - պատմում է մեծ դուստրը՝ Արմինեն:

1992 թ. արյան քաղցկեղից մահացավ 43-ամյա Հելբիկ Հակոբյանը: Քիմիկ ընկերները համոզված են. Հելբիկ Հակոբյանի հիվանդությունը կախված չէր այդ զինամթերքի արտադրության հետ: 10 ամիս պառկած էր հիվանդ, 3-ամյա դուստրը՝ Գոհարիկն էր նրան զբաղեցնում. միշտ ասում էր. «Գոհարիկն իմ դեղն է»:

Յուրաքանչյուրը պետք է լինի այնտեղ, որտեղ ինքն ավելի օգտակար է

«Դժվար է ասել, թե որտեղ էր ավելի անհրաժեշտ. սա էլ էր պետք, այն, ինչ արել էր Հելբիկը, մենք: Շատ դեպքեր են եղել, երբ մարդիկ այստեղ փորձարկումների ժամանակ ոչ միայն վիրավորվել են,

6Ջ

այլ նաև կյանք են կորցրել: Յուրաքանչյուրը պետք է լինի այնտեղ, որտեղ ինքն ավելի օգտակար է», - համոզված է ԵՊՀ Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ռոմիկ Հարությունյանը:

«Մարտի դաշտ մտնողի մի օրն ավելի արժեքավոր է, քան տարիների մեր չարչարանքը: Երբ մարտիկը զոհասեղանին իր կյանքն է դնում: Մենք այստեղ ենք չարչարվել, բայց դա այդ նույն արժեքը չունի: Մեր ազգի սերուցքը մահացավ կռվի դաշտում, - ցավով ասում է Նորիկ Գալստյանը: Լեոնիդ Ազգալդյանը, Վլադիմիր Բալայանը, Շահենը... Ամեն մեկը մի լեգենդ էր, և այժմ նրանցից ոչ ոք չունի հերոսի կոչում: Կոմանդոսը հերոսի կոչում չունի... Եթե նրանք չեն գնահատվում, էլ ուր մնաց մեզ հիշեն»:

Մի քանի տարի հետո, երբ հնարավոր եղավ արդեն ներկրել զինամթերքը, ամբողջությամբ դադարեցվեց զինամթերքի տեղական արտադրությունը: «Ինքնաշեն ավտոմատները կարող էին կրակել միայն 1500 հատ, որից հետո վտանգավոր էին դառնում», - ասում է Նորիկ Գալստյանը:

«Սիրողական մակարդակով զենք արտադրելը ճիշտ չէ, - ասում է Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի դեկավար, պրոֆոսոր Սուրեն Խառատյանը: - Այժմ՝ այսքան տարի-ներ հետո, թվում է՝ մանկական խաղ, բայց մարդիկ զբաղվում էին, ստեղծում էին, որովհետև այդ պահին անհրաժեշտ էր»:

Մանե ՊԱՊՅԱՆ

Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՎ ԵՂԱՎ... ԼՈՒՅՍ

Քանի դեռ չգիտես, թե որտեղ ու երբ է քեզ մահ սպասում, դու նրան ամեն ժամ սպասիր, որպեսզի անպատրաստ չլինես նրա գալստյան ժամանակ...

ԻՄԱՍՏԱՍԵՐ

Անձրևը երկար տեղալուց հետո վերջապես հոգնել-քարակել էր:

- Քայլե՞նք,- կոճակը սեղմեց ու բացված անձրևանոցը վեր պարզելով Կարոն դիմեց ելքի մոտ անձրևի դադարին սպասող աղջկան:

- Քայլենք, - ակամա համաձայնեց աղջիկը...

Քայլեցին...

Մարաթոնյան քայլք էր դա՝ հետագայում ինքն իրեն կշտամբում էր Կարոն...

Քայլեցին շուրջ քսան տարի... Տարբերության սահմանները սկզբում փոքր, անցնող օրերի հետ մեծացան, ընդգծվեցին: Դրանք ավելի շատ բաժանում, հեռացնում էին, քան կամրջում, միացնում:

- Ոտքս կոտրեր, չքայլեի, - նեղսրտած պահերին Կարոն Պարոնյանի տխուր հերոսին էր հիշում:

Բայց ժամանակի սլաքը ետ տանելու փորձը խաբկանք է, անհեթեթություն: Եվ, հետո, նախախնամությունից ո՞վ է խուսափել: Մնում էր հարմարվել... հանուն երեխաների: Միայն թե հարմարվելն էլ անընդդրկելիին տիրելու պես մի բան էր:

- Գլխիս մաթեմատիկոս ես դարձել, - կինը «մաթեմատիկոսն» ամեն անգամ արտասանում էր ընդգծված արհամարհանքով: - Ուրիշներն առավոտից իրիկուն փող են հաշվում, իսկ դո՞ւ... չոր ու ցամաք թվեր: Բանաձևերի լուծման արդյունքում էլ վերջում ի՞նչ ես ստանում՝ իքս կամ իգրեկ, որոնք, պարզվում է՝ հավասար են զրոյի:

Ողջամտությունը լռելն էր, երբեմն՝ սուսուփուս տնից դուրս գալը:

Հազվադեպ փորձում էր բարոյախոսել. «Կարևորը նյութը չէ, այլ հոգևորը: Այս աշխարհում ամեն մեկն իր բաժին ճանապարհն է անցնում: Հետո էլ՝ երկիր է, պետություն: Օրենքներ կան ու... ժամանակի հետ ամեն ինչ լավ կլինի...»

Բայց դե՝ բարոյախոսելը երբեք էլ հաճելի զբաղմունք չէ, և ստացվում էր հակառակը:

- Բրեժնևի ժամանակ հեշտ չէր, - բորբոքվում էր կինը, - պերեստրոյկայի ժամանակ զգուշանալ էր պետք, անկախացումից հետո շարժ չկա: Ինչ-որ մի բան քեզ միշտ խանգարում է: Բա դու հեչ վերև չե՞ս նայում՝



մատնացույց էր անում չորրորդ հարկը: Ա՛յ տղամարդը. բարձրացի՛ր, նրա նորոգած բնակարանը համեմատիր քոնի հետ, գնա Վանաձոր թաղամասում նոր կառուցած առանձնատո՛ւնը տես: Պա-լա՜տ...

Իսկ վերևում խնջույք էր. պարում էին՝ ոտքերի համաչափ թփթփոց էր ու իբրև թե երգչի կլկլոցը.

Վույ ամա՜ն նազա՜նս,
Յոթ կրակա՜նս,
Կյանքիս պահապանը՜,
Թանկագին նազա՜նս...

Անհեթեթ բառերի շարան, որից, սակայն, պարի ռիթմը չէր խախտվում...

Կարոն զարմանում էր, որ քամահրանքի փոխարեն կնոջ հոգում չարությունն ու նախանձն են շարժվում: Հետո զարմանքը վերածվում էր տագնապի՝ սորուն ավազների վրա կառուցած տունը անզոր է այլևս պահպանել: Դիմակայելու միակ միջոցը միայնության մղձավանջից փախչելն էր, կյանքը անանձնական ուրախություններով կարծելը:

Կյանքն էլ, սակայն, Կարոյի համոզմամբ, կարճ չէր լինելու: Դեռ ուսանողական տարիներին հոգում նախազգացում ծնվեց՝ եթե մինչև 33 տարեկան իրեն ոչինչ չպատահի, երկար կապրի: Ինչի՞ց ծնվեց նախազգացումը, ինչո՞ւ հենց 33. Քրիստոսի տարի՞քն էր թելադրողը, թե՞ Բալզակի «Շագրենի կաշին», որը, սակայն, մի քանի տարի առաջ էր ընթերցել: Անիմանալի էր ներշնչման խորհուրդը: Բայց այն կար...

•••

Ամռան շոգն էր պատճառը, երևի, հետն էլ ընկճված տրամադրությունը մի փոքր ցրելու ցանկությունը, ու Կարոն նախաձեռնեց երկօրյա հանգիստ՝ Սևանա լճի ափին:

Նախատեսված ժամին բոլորը հավաքվեցին ուռենու տակ՝ պատրաստ ճանապարհվելու: Չկար միայն կազմակերպիչը՝ Կարոն:

- Հանդիպման տեղը հաստատ շփոթել է, - կես-լուրջ, կես-կատակ հեգնեց Գարիկը: -Ախր էնքան է սիրում ուրիշներին հանգամանորեն բացատրել: Երկու օր առաջ անծանոթ մեկին մեկ ժամ նկարագրեց՝ ինչպես գտնել Անշարժ գույքի վաճառքի նորաստեղծ գործակալությունը. այս փողոցով կիջնեք մինչև առաջին չէ, երկրորդ նրբանցք, խաչմերուկի հարևանությամբ առաջինը չէ, երկրորդը չէ, երրորդ շենքի մոտով աջ չեք թեքվի, կգնաք ձախ, բարձրահարկի նախասրահում երկրորդը չէ, երրորդ դուռը ընդունարանն է...

Երեկ էլ հավաքվելու ժամն էր մանրամասնում՝ առավոտյան ժամը 7-ին չէ, 6-ին կհանդիպենք հրապարակի ուռենու տակ...

Ժամը 6-ին, ի՞նչ կարիք կար այդքան շուտ...

- 6-ը շու՞տ է, - եռանդով կլոր փորը քորեց Մինասը: - Ամեն օր ժամը 4-ից ոտքի վրա եմ: Պառկում եմ քնելու, իսկ քունս չի տանում: Ականջս մի տեսակ ձենի է...

- Որ ի՞նչ...

- Ինքս էլ չգիտեմ: Ու թե հանկարծ քունը հաղթում ու ուշ եմ արթնանում, սարսափում

Ջ8

եմ. թվում է՝ բոլորն աշխարհը տարան-պրծան, ինձ բան չմնաց... խառը ժամանակներ են:

- Բան չմնա՞ց, - չոր կտրեց Վահեն: - Մարդու մերօրյա տեսակ է: Լույս աշխարհ գալու առաջին օրից ամեն մեկը մտածում է տանելու մասին: Միայն տանելու: Ոչ ոք չի ասում՝ աշխարհ գալուց ինձ հետ ի՞նչ բերի: Տկլոր գալիս ենք, հետո սրտնեղում, թե՝ դատարկ ենք գնում...

Մի ուրիշ անգամ Մինասը կառարկեր, կվիճեր, բայց, իր համար էլ անհասկանալի, որոշեց լռել...

•••

Մշուշը, որ սահել, իջել-հասել էր անտառափեշեր, նոսրանալով, անշշուկ քաշվում-բարձրանում ու հալվում էր, ասես խուսափելով արևի հետ հանդիպումից:

Ժամանակն անցնում էր, իսկ Կարոն, որ ճշտապահության պահապանն էր, չկար: Պիտի լիներ, բայց չկար: Ու, րոպեներ անց, արևով բացվող օրը, որ ընկերներին Սևան պիտի տաներ, ուղեկցեց... հիվանդանոց...

Դարանակալ ճակատագիրն ամեն քայլափոխի հետևում է մարդուն: Լուսաբացի մոտ Կարոն զգաց, որ սիրտը չի ուզում ենթարկվել: Հետո եկավ ծանր ընդարմացումը...

Ուշքի եկավ հիվանդանոցում: Հիվանդասենյակում բացի իրենից, ևս երկու հիվանդ կար: Պատի տակ մահճակալին պառկածը ծանր տնքում, մեկ-մեկ մռնչում էր: Հետո Կարոն իմացավ՝ մեծ կարողություններ ուներ ու երևի ցավ էր թողնել-հեռանալը: Մյուսն ապրել էր համեստ վաստակով. Հիմա անշարժ պառկել, աչքերը հառել առաստաղին, լուռ սպասում էր. ոչ տնքոց, ոչ հառաչ:

Մահվան երևույթը նույնն էր: Տարբեր էին նրա ընկալումները...

- Մարդն իսկապես դերասան է, - մտածեց Կարոն, - և իրենով է պայմանավորված՝ կյանքը կլինի դրամա՞, կատակերգությո՞ւն, թե՞ ողբերգութ-յուն: Համենայնդեպս ընտրության հնարավորությունը բացառված չէ:

Ներարկումից հետո կրծքի ցավերը փոքրինչ մեղմացել էին: Ուղղակի ահավոր թուլություն էր զգում: Փորձեց փակել աչքերն ու մտքերը միանգամից սրվեցին:

- Ինչի՞ եմ անընդհատ մահվան մասին խորհում, - մտքում նեղացավ իր վրա: - Առանց մեր օգնության էլ հնարավոր չէ, որ նա մեզ մոռանա: Ծննդի առաջին իսկ վայրկյաններից ժամանակը գործում է իր օգտին: Դա բնական է ու բանական... Վիրավորականն ու տհաճը մահվանն ուղեկցող արարողություններն են՝ դագաղ, լաց ու կոծ, սև ժապավեններ...

Կրծքի ցավը շարունակում էր թուլանալ: Շուրջբոլորը լույսը ծավալվում էր, և մութը հալվում էր նրա մեջ:

- Մարդ թիթեռ դառնար՝ թռչեր-հեռանար, ծաղիկ դառնար՝ չորանար. այս խոսքերը ինչ-որ մեկի կողմից հեղինակվե՞լ էին, թե՞ նոր ծնվեցին, Կարոյի միտքն անհույս դեգերում էր:

Նա զգաց, որ հոգնած է, անչափ հոգնած: Կոպերը ծանրացել, իրենք իրենց փակվում էին: Ցավերն այլևս նահանջել էին, իսկ լույսը թունելի միջով տանում էր անծանոթ հեռուն...

Եվ եղավ... լույս...

Ճակատագիր

Ինչպես վախճանվեց Չարենցը



Ինչպե՞ս է մահացել Չարենցը: Այս մասին շատ է խոսվել, իսկ թե ի՞նչ է զգացել նա, թե ի՞նչ է կատարվել իրականում, դժվար է ասել:

Փորձագետներից շատերը համոզված են, որ Չարենցի դեմ ծավալված պայքարի գլխավոր դերակատարը բանաստեղծ Գևորգ Աբովն է եղել: Նա Չարենցի մասին ասում էր. «Ընկերներ, մեզ բոլորիս համար պարզ է, որ Չարենցն ունեցել է նացիոնալիստական ռեակցիոն տրամադրություն, դա դաշնակցական կոնցեպցիա է»:

Մնացածը հստակ է: Եղիշե Չարենցը պիտի դատապարտվեր կալանքի և մահվան: Այս ծանր ժամանակաշրջանում Ավետիք Իսահակյանն այցելում է Չարենցին և նրա տանն ականատես լինում շատ տխուր մի տեսարանի: Նրա ընտանիքի անդամները ծանր վիճակում էին, Չարենցը կտրված էր նյութական հատկացումներից, ինչի հետևանքով նրա կինն ու երեխաները կարիքի մեջ էին: Նման պայմաններում Չարենցը ստիպված էր վաճառել իր գրասեղանը, գրքերը և մի շարք իրեր: Չարենցն արտասավում էր...

Անտանելի ցավերի պատճառով նա ստիպված էր ամեն օր դեղեր ընդունել: Նրա դեղերը վերջացել էին, ցավերից գալարվում էր: Կինը Իզաբելլան, խնդրում է Իսահակյանին, որ այդ դեղերից հայթայթի: Իսահակյանը խոսք է տալիս և կատարում է իր խոստումը: Որքան էլ շատերին զարմանալի թվա, ըստ որոշ վկայությունների, այդ դեղ կոչվածը մորֆի էր:

Ամենամեծ ցավը հենց այդ գրասեղանի վաճառքն էր, որի վրա ամեն օր Չարենցը գրում էր այն գործերը, որոնք պիտի դառնային հայ գրականության նշանավոր էջերը: Իր գործերի մեջ նա իր հոգին էր դրել, դրա համար էլ լաց եղավ, երբ ստիպված եղավ վաճառել այդ հասարակ, բայց և այնքան թանկ ու հարազատ իրը:

1937 թ.-ի հուլիսի 26-ին Չարենցին հանում են տնային կալանքից ու տանում բանտ: Նա մեղադրվում էր խորհրդային իշխանության դեմ պայքար մղելու համար:

Բանտում էլ շարունակում էր ստեղծագործել: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 6-ին կնոջը գրում է. «Ամուր եղիր, հարազատս, եթե նույնիսկ փողոց գցեն: Չէ՞ որ միայն մենք չենք տառապում, այլ շատ շատերը»:

Իզաբելլան ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Միկոյանին նամակ է գրում և խնդրում ազատել Չարենցին՝ հաշվի առնելով նրա անմեղությունն ու առողջական վիճակը: Ըստ որոշ տվյալների Բերիայի վարձկան լրտեսների «թեթև ձեռքով» այդ նամակն անգամ հասցետիրոջը չի հասել: Չարենցի օգտին գրված բոլոր նամակները հետագայում գտնում են Բերիայի գրասեղանի գզրոցում:

Նույն թվականի նոյեմբերի 27-ին հաղորդվում է, որ Չարենցը մահացել է բանտում, որտեղ էլ դիահերձվել է: Սակայն դրանից մեկ ամիս առաջ նա Իսահակյանին գրում էր, որ հոգով պայծառ է ու առույգ: Եթե նա մահացել է նման հանգամանքներում, ապա ինչո՞ւ նրա մարմինն օրինավոր չհուղարկավորվեց, որևէ կոնկրետ տեղում չհանձնվեց հողին: Սա շատերին հիմք է տալիս կարծելու, որ նա նման հանգամանքներում չի մահացել:

Չարենցի ծննդյան հարյուրամյակի առիթով «Մոլորակ» հանդեսում լույս է տեսնում մի հոդված «Ո՞վ սպանեց Եղիշե Չարենցին» խորագրով: Հոդվածում նկարագրվում է, որ Սամսոն Ստեփանյան անունով մի մարդ, ով գնդապետ էր և արժանացել էր Լենինի շքանշանի, եղել է Չարենցի դահիճներից մեկը: 1937 թ.-ի նոյեմբերի 27-ի վաղ առավոտյան կոմիսար Մուղդուսի գլխավորությամբ, ով նաև կազմակերպել էր Վահան Թոթովենցի սպանությունը, Չարենցը հանվում է Երևանի իր բանտախցից և տեղավորվում մեքենայի մեջ: Մահմեդ անունով վարորդը վարում է մեքենան, որի մեջ էին Մուղդուսին, Չարենցը, Սամսոն Ստեփանյանը և մի բժիշկ:

Գնում են դեպի Ֆանտան գյուղը: Ցուրտ էր, Չարենցը մրսում էր: Զգում էր, որ տանում են սպանելու: Մերժում է առաջարկված վերարկուն: Ֆանտանի կամրջի մոտ կանգնում են, իսկ ձորաբերանի մոտ գյուղացիներն արդեն փոս էին փորել, իբրև սյուն տեղադրելու նպատակով: Փոսի մոտ Մուղդուսին արձակում է հրամանը. «Սամսոն, վերջացրո՛ւ սրան»:

Կրակում են Չարենցի ծոծրակին և գցում փոսի մեջ: Բժիշկը վկայում է, որ թեև մարմինը դեռ տաք է, բայց նա դադարել է շնչել: Հողով ծածկում են փոսը, հարթեցնում տեղը:

Այս պատմությունը հետագայում՝ 1970 թ.-ի սեպտեմբերի 3-ին, Սամսոն Ստեփանյանը պատմել է իր եղբոր դստերը և նրա ամուսնուն՝ Մայիս Հայրապետյանին: Վերջինս էլ այս վկայությունը հրատարակել է «Մոլորակ» հանդեսի 1997 թ.-ի մարտի 18-ի համարում:

Թամարա ՊՈՂՈՍՅԱՆ

Զանազան-զարմանազան



ՎԱՐՈՒՆԳ ՏՈՒՆԸ
(30 St Mary Axe)

Լոնդոնում վեր բարձրացող այս շենքը Swiss RE ընկերության գրասենյակն է: Ճարտարապետը Նորման Ֆոսթերն է: Կառուցվել է 2004 թ.: Այս նախագիծը ջարդեց կարծրատիպային այն պատկերացումը, թե ինչպիսին կարող է լինել գրասենյակի շենքը: Ժողովուրդն անվանում է էրոտիկ վարունգ: Շենքի բարձրությունը 180 մետր է: Լոնդոնում բարձրությամբ երկրորդ շենքն է:

ՓԻՂ ՏՈՒՆԸ
(Elephant Tower)

Ճարտարապետության տեսանկյունից Բանգկոկի (Թաիլանդ) առավել բացառիկ շենքերից մեկն է: Նախագծել է Arun Chaiseri Consulting Engineers Company-ն 1997թ.: 102-մետրանոց երեք աշտարակներում բնակելի թաղամասեր են, գրասենյակներ, խանութներ, գործում է օտար լեզուների դպրոցը: Գաղափարի հեղինակը թաիլանդցի ճարտարապետ է, որն, ասում են, հատուկ քնքշանք է տածում Թաիլանդի ազգային խորհրդանիշի հանդեպ: Իր սեփական տունն էլ ճարտարապետը զարդարել է փղերի տարբեր արձանիկներով:

ԱՌԱԳԱՍՏ ՏՈՒՆԸ
(The IAC BUILDING)

Գտնվում է Նյու Յորքում, IAC մեդիաընկերության շտաբ բնակարանն է: Ճարտարապետը Ֆրենք Գերին է: Շենքը կառուցվել է 2007 թ.: Քսան տարի շարունակ Նյու Յորքը հոռետեսորեն էր վերաբերվում հանրահայտ ճարտարապետի նախագծերին: Եվ ահա վերջապես հանձնվեց: Առագաստ շենքը բարձրանում է Մանհեթենում՝ Հուձոնի ափին, և բազմազանություն է մտցնում Չելսի շրջանի տաղտկալի բնապատկերի մեջ:

ՁՈՒ ՏՈՒՆԸ

Մոսկվայի կենտրոնում՝ Մաշկովի փողոցում մի քանի տարի առաջ հայտնված այս տարօրինակ շենքը, որ հիշեցնում է Ֆաբերժեի ձուն, բնակելի տուն է, բնակարաններն էլ, բնականաբար, էժան չեն: Կառուցվել է 2002 թ., նախագծի հեղինակը Սերգեյ Տկաչենկոն է:

ԿՈՄՈԴ ՏՈՒՆԸ

Ճիշտ ու ճիշտ բնակարանի կահույք նմանակող այս շենքը վեր է բարձրանում ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինայի նահանգի Հայ Փոյնթ քաղաքում: Կառուցվել է 1920 թ., ճարտարապետը Սիդ Լենգերն է: Հայ Փոյնթում այս շենքի հայտնվելը պատահական չէ: Այստեղ է գտնվում փայտամշակման ամենախոշոր արտադրություններից մեկը՝ High Point Tool Inc գործարանի շտաբ բնակարանը: 100 տարուց ավելի է, ինչ քաղաքում ամեն տարի անց է կացվում կահույքի ցուցահանդես: Շենքը կառուցվել է Հայ Փոյնթի առևտրային պալատի պատվերով և ծառայում է որպես զբոսաշրջիկների համար տեղեկատվության կենտրոն:

ՇՈՒՌ ՏՎԱԾ ՏՈՒՆԸ

Լեհաստանի Շիմբարկ բնակավայրում գտնվող այս տունը «լույս աշխարհ է եկել» 2007 թ., ճարտարապետը Դանիել Չապևսկին է: Նախագծի հեղինակի խոսքով՝ այս տունը մարմնավորում է կոմունիստական դարաշրջանի ավարտն ու ժամանակակից լեհական հասարակության վիճակը: Այժմ շենքում գործում է բնագիտության թանգարանը: Այստեղ անց են կացվում տարբեր ցուցահանդեսներ:

ՄԿՆԻԿ ՏՈՒՆԸ

Մեր լավագույն ընկերը՝ համակարգչային մկնիկն, այսօր իր համար նոր դերով է հանդես գալիս: Architecture and Vision միջազգային դիզայներական խումբը համակարգչային մկնիկի տեսքով ոչ մեծ բնակելի շարժական տան նախատիպ է ստեղծել: Իհարկե, սա լիարժեք բնակելի տուն չէ: Չափերով այն, ավելի շուտ, ամառանոցի է նման: Ապահովված է ապրելու համար անհրաժեշտ ամեն ինչով. ունի ոչ մեծ խոհանոց, զուգարան, ցնցուղ, մահճակալ: Հավաք է և կշռում է ընդամենը մի քանի տոննա, ինչը թույլ է տալիս կցուկով հեշտությամբ տեղափոխել տեղից տեղ՝ կախված ցանկությունից ու հնարավորությունից: Շարժական ամառանոցը սովորական ամառանոցից, բնականաբար, ավելի լավ է. կարող եք մնալ ձեր ուզած վայրում: Ձանձրալի հարևանների ու վատ եղանակի դեպքում ցանկացած պահին կարող եք տունը կցել մեքենային ու տեղափոխվել: Դեռևս այսպիսի մեկ մկնիկ տուն է ստեղծվել, ցուցադրված է այն Վենետիկի հրապարակներից մեկում: Architecture and Vision ընկերությունը հույս ունի, որ մոտ ապագայում քիչ թե շատ ապահովված ընտանիքները այսպիսի շարժական ամառանոցի պատվերներ կտան:

ԲՈՑ ՏՈՒՆԸ

Գտնվում է Տոկիոյում: Կառուցվել է 1990 թ. Asahi գարեջրի գործարանների պատվերով: Ճարտարապետը Ֆիլիպ Սթարքն է: «Asahi գարեջրի գործարանները միշտ հետաքրքրվել են նորի հետազոտությամբ, և ինձ փրկում է այն, որ ես միանգամայն խորհրդանշական շենք եմ կառուցել: Այն կանգնած է լյումինեսցենային ապակյա հենահարթակի վրա, ինչը խորհրդանշում է էներգիան, որն էլ, իր հերթին, խորհրդանշում է գաղտնիքը: Բազալտե սև պատն ու բոցը խորհրդանշական ձևով պատկերել են կիրքը», - իր գաղափարը բացատրում է Սթարքը:

ԵՐԿՆԱՔԵՐ ՊԻԿՍԵԼՆԵՐԻՑ

Հարավարևելյան Ասիայում հերթական



երկնաքերը կառուցելու մասին լուրն առանձնահատուկ զգացումներ չի առաջացնում: Սովոր ենք, չափից շատ երկնաքերներ են այս տարածաշրջանում կառուցում: Բայց եթե նկատի առնենք, որ այս երկնաքերն ասես պիկսելներից լինի, ապա միանգամից հետաքրքիր կդառնա. տեսնես էդ ի՞նչ նոր բան են հորինել այս ասիացիք:

Իսրայելական OMA ճարտարապետական ընկերությունը նախագծել է 310-մետրանոց 77-հարկանի երկնաքեր, որը, չնայած ճգնաժամին, Թաիլանդի մայրաքաղաք Բանգկոկի կենտրոնում վեր կբարձրանա արդեն 2012 թ.: Ներկայում Թաիլանդի ամենաբարձր շենքը Baiyoke Tower II-ը (304 մ): Սակայն Mahanakhon (թաիլանդերենից թարգմանած՝ «մեգապոլիս») աշտարակի՝ երկրի համար ռեկորդային բարձրությունը չէ, որ համարվում է ճարտարապետական գլխավոր «հաղթաթուղթը»: Հաղթաթուղթն այն է, որ մոդեռնիստական այս շենքն իր ողջ բարձրությամբ մեկ ասես փաթաթված է լինելու պիկսելներից ժապավեններով, ինչը երկնաքերին համակարգչային տեսք է հաղորդելու:

Բանգկոկում, ինչպես հայտնի է, բնահողը չափից դուրս ջրառատ է, և շատ դժվար է ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցելը: Արդյունքում ավտոկայանատեղիները բարձրահարկերի առաջին հարկերում են

➲10

⊃9


տեղակայված, ինչի հետևանքով քաղաքի գործարար մասում փողոցներն անկյանք ու անհրապույր տեսք ունեն: Mahanakhon աշտարակում, սակայն, նախագծի գլխավոր ճարտարապետ Օլե Շերենի մտահղացմամբ, քաղաքի փողոցները «ներքաշվելու են» շենքի մեջ: Ավտոկայանատեղին տեղակայվելու է շենքի հետևում, իսկ դեպի փողոց դուրս է գալու սրճարան-ռեստորաններով ու խանութներով «պիկսելային» տեռասը, որը երկնաքերը միացնելու է մետրոյի մոտակա կայարանին: Երկնաքերի վերին հարկերում «պիկսել»-բլոկներից «ժապավենները» օգտագործվելու են որպես պատշգամբներ և տեռասներ գրասենյակների ու բնակարանների համար: Շենքը բաժանված է լինելու առևտրային, ժամանցային, գրասենյակային ու բնակելի գոտիների:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ ՆՈՐ ՕՌԼԵԱՆԻ ՀԱՄԱՐ

Ջազի մայրաքաղաք Նոր Օռլեանը (ԱՄՆ) դեռևս ամբողջովին «մեջքը չի շտկել» 2005 թ. պատուհասած աղետից հետո. «Կատրինա» փոթորիկը հիմնովին ավերեց քաղաքը: Քաղաքի բնակչությունը, 2005 թ. համեմատ, կիսով չափ նվազել է: Սակայն քաղաքը թափով վերականգնվում է: Նորանոր նախագծեր են մշակվում, որոնց մեծ մասն անմիջապես կյանքի է կոչվում: Այդպիսի նախագծերից մեկն էլ «Նոյ» կոչվող բուրգաձև կամարավոր համալիրն է: Այս վիթխարի շենքի անվանումն արդեն խոսում է այն մասին, որ դրան չի կարող սպառնալ ոչինչ՝ ոչ մի փոթորիկ ու ջրհեղեղ: Բուրգի ձևը նույնպես դրա մասին է վկայում: Չէ՞ որ, ինչպես ցույց է տալիս ճարտարապետության պատմությունը, բուրգից ավելի հուսալի ու հարատև կառույց չկա: Եվ այն պիտի վերականգնված Նոր Օռլեանի 100 հազար բնակչության համար որպես տուն ծառայի: Սա արդեն սովորական պատկերացմամբ տուն չէ, սա մի ամբողջ թաղամաս է: Ավելին՝ քաղաք է քաղաքի մեջ, որի համար սարսափելի չէ ոչ մի արտաքին գործոն: Եվ եթե նույնիսկ Նոր Օռլեանին նոր աղետ սպառնա, «Նոյի» բնակիչները դժվար թե նկատեն դա: Կառույցի ներքին տարածքում լինելու է լիարժեք կենսագործունեության համար անհրաժեշտ ամեն ինչ՝ հարկաբաժիններ, դպրոց, մանկապարտեզ, գրասենյակներ, հյուրանոց, խանութներ, ռեստորաններ, խաղատուն, ավտոկայանատեղի և անգամ զբոսայգիներ: Ընդմին՝ կանաչ գոտիներին զգալի տարածք է հատկացվելու՝ 30-ական հարկ յուրաքանչյուր 3 70-հարկանի աշտարակում: Բայց այս շենքում ամենահետաքրքիրն այն է, որ սա ոչ միայն վիթխարի բնակելի համալիր է, այլև լողացող տախտակամած. այն կանգնած է լինելու հսկայական օդաջրային բարձի վրա, ինչն էլ պիտի որ պաշտպանի «Նոյ» համալիրը ջրհեղեղներից ու փոթորիկներից:

ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ QUEENS-ՈՒՄ

Pratt ինստիտուտի ուսանող էլիոթ Ռւայթը մշակել է Քվինսում (Նյու Յորք) արվեստների թանգարանի վերակառուցման նախագիծը: Նախագիծը բարձրացված հիմք ունի, ինչը թանգարանի փակ լինելու դեպքում զանազան միջոցառումների



համար տարածություն է ապահովում: Օգտագործվելու են բետոնով ծածկված ցանկապատերը: Շինարարության ժամանակ ներսում մեծ ռետինե գունդ է փչվելու, որը պիտի բետոնը պահի մինչև դրա պնդանալը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՐՈՒՅՐ
(ԴԱՐՄՇՏԱԴՏ, ԳԵՐՄԱՆԻԱ)

Այս U-աձև 12-հարկանի բնակելի համալիրը նախագծել է ճարտարապետ և նկարիչ Ֆրիդենսրայխ Հունդերտվասերը Վիեննայից: 10 տարի առաջ կառուցված այս շենքում 105 բնակարան կա, տարբեր ձևերի 1000 պատուհան, սրճարան, բար, ներքին բակ՝ արհեստական լճով, իսկ անկյունաձև տանիքները ծածկված են բուսականությամբ՝ ծառ ու խոտով, թփերով և ծաղիկներով:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱԿՏՈՒՍ
(ՌՈՏԵՐԴԱՄ, ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ)

Քաղաքային կակտուսը Ռոտերդամում երկինք է բարձրանում՝ ասես անապատից արշաված օտարերկրյա նվաճող: Այս 19-հարկանի շենքը քաղաքի բնակիչներին ապագայի կանաչապատ շենքերի հետ հաղորդակցվելու հնարավորություն է տալիս: Կառույցի մակարդակը թույլ է տալիս, որ բնական լույսը թափանցի բնակելի տարածքի միջով, և, միևնույն ժամանակ, բնակիչներին հնարավորություն է ընձեռում բաց հարթակներում, որոնցով առատ է շենքը, հիանալ դեպի քաղաքի նավահանգիստը բացվող սքանչելի տեսարանով:

ELIPHANTE
(ԿՈՐՆՎԻԼ, ԱՐԻԶՈՆԱ)

Այս անսովոր կացարանը՝ 3 հեկտար մակերեսով, օրգանական ճարտարապետության գեղարվեստական նմուշ է: Կառուցել են ամուսիններ Մայքլ Քանն ու Լեդա Լեւանտը: Շինությունը բաղկացած է ձեռքի աշխատանք 5 առանձին մասերից, որոնք կապված են իրար ընդհանուր ինքնատիպ թեմայով. հիմնական բնակարանները գտնվում են Eliphante-ում և միացված են մեդիտացիայի զոնային, պատկերասրահին, լոգարանին, քանդակների այգուն ու արհեստական լճերին: Ընդմին, կառույցի համար հումքը վերցվել է հենց տարածքից՝ քար, կոտրտված ապակի, փայտ, սալիկ, սվաղ:

ՖԵՐԴԻՆԱՆԴ ՇԵՎԱԼ ՊԱԼԱՏԸ
(HAUTERIVES, ՖՐԱՆՍԻԱ)

Գյուղական փոստատար Ֆերդինանդ Շևալը, որը ճարտարապետական կրթություն չուներ, տարիներ շարունակ քարեր էր հավաքում այն վայրում, որտեղ ապրում էր. վաղեմի ժամանակներում այստեղ ծովի հատակ էր եղել: Ճարտարապետական տարօրինակ ոճերով ու դրանց համակցություններով, հնդկական, ալժիրական, հյուսիսեվրոպական ու չինական ճարտարապետությամբ ու դիցաբանությամբ ոգեշնչված՝ նա սկսեց իր կյանքի գործը: Այլերով, կենդանիների քանդակներով հագեցած այս զարմանալի հուշարձանի կառուցումը 33 տարի տևեց: Շևալը այն ավարտեց 88 տարեկանում, մահից մեկ տարի առաջ՝ 1924 թ.: «Պարզունակ արվեստի» այս հուշարձանն այսօր Ֆրանսիայի ամենասիրված տեսարժան վայրերից մեկն է:

Գրասենյակների, առևտրի կենտրոնների ու երկնաքերների ժամանակակից աշխարհում, բարեբախտաբար, կան շենքեր ու կառույցներ, որոնք նախագծել են ճարտարապետական արվեստի իսկական վարպետները, ինչի շնորհիվ այդ շինությունները անկրկնելի, եզակի են դարձել: Դրանք զարդարում են մեր աշխարհը: Ներկայացնենք ընդամենը մի քանիսը՝ արվեստի իսկական գործերից մինչև զարմանահրաշ կառույցները:

Մինչև 1980-ականների վերջը Շվեդիայի Յուկկասյարվի բնակավայրը, որը Հյուսիսային բևեռից 200 կմ է հեռու, շվեդական սովորական գյուղակ էր, ոչնչով աչքի չէր ընկնում: Սակայն 1989-ին Յուկկասյարվի ժամանեցին սառույցից քանդակներ կերտող ճապոնացի վարպետները: Այս այցելությունը պսակվեց սառցե քանդակների հիանալի ցուցահանդեսով: Հաջորդ տարի սառցի մեծ բեկորից հյուղակ կառուցվեց, որում զետեղվեց սառցե արվեստի՝ Arcti-ի էքսպոզիցիան: Այսպես սկիզբ դրվեց Շվեդիայի ժամանակավոր գոհարի՝ սառցե հյուրանոցի կառուցման ավանդույթին: Հյուրանոցը գոյատևում է ընդամենը 5 ամիս՝ դեկտեմբերից մինչև ապրիլ, այնուհետև հալվում է: 40 քանդակագործներ և շինարարներ հյուրանոցի շինարարությունը սկսում են հոկտեմբերի վերջին: Մոտակա Տուրնե գետից սառույցի մեծ խորանարդիկներ են հատվում-հանվում, և մետաղյա շաբլոնների օգնությամբ ձյունապատ կամարներ են բարձրացվում: Սառցե հյուրանոցի վրա ընդհանուր առումով ծախսվում է 40 տոննա սառույց և 30 տոննա ձյուն: Ամեն տարի սառցե հյուրանոցը կառուցելու համար երկրի իշխանությունները հրավիրում են տարբեր ճարտարապետների, քանդակագործների և դիզայներների, և, բնականաբար, ժամանակավոր այս հյուրանոցները էականորեն տարբերվում են իրարից: Հյուրանոցն ամբողջովին կահավորված է, ողջ կահույքը նույնպես սառույ-

⊃13

Հայերենը, հայկականը, հայը

Հայկական ավանդացույցի էջերից

Հացյաց դրախտ

Տարոնում Արածանի գետի ձախ ափին հացենիների մի պուրակ կա, որ կոչվում է Հացյաց դրախտ: Գեղեցիկ ծառ է հայկական հացենին՝ ձիգ իրանով, մոխրագույն տերևներով: Նա այնպիսի պահվածք ունի, որ նմանվում է գոտին միշտ պնդեցրած զորականի: Երկու հազար տարի առաջ ոչ այս ծառն է հացենի կոչվել, ոչ էլ Տարոնի պուրակը Հացյաց դրախտ:

Հայոց աշխարհի թագուհի Էրատոն տարօրինակ պատժի է ենթարկում իր անհնազանդ զորականներից երկուսին: Նրա հրամանով այդ երկու զորականներին բերում և գցում են Տարոնի ծառերի պուրակը, որ սովամահ լինեն: Երկու ամիս հետո թագուհու զինվորները երբ մտան պուրակ, զարմացան նրանց ողջ տեսնելով:

Հետո մարդիկ իմացան, որ նրանք անտառում սոված չեն մնացել: Ձիգ ծառերի տերևներից շաքարալից հյութ է թափվում խոտերի վրա ու պնդանալով դառնում գազպեն /մանանա/:

- Մեր հացը եղել է այս մեղրահաց գազպենը, - ասացին զինվորականները, - սրանք սովորական ծառեր չեն, այլ հացենիներ, այս պուրակն էլ ոչ թե անտառ է, այլ Հացյաց դրախտ:

Այդ ժամանակվանից էլ գազպենատու ծառը կոչվեց հացենի, իսկ Տարոնի պուրակը՝ Հացյաց դրախտ:

Համախմբում խաշի սեղանի շուրջ

Այս կերակրատեսակի պատրաստման եղանակը և ուտելու ծիսակարգը չեն փոխվել դարեր շարունակ:

Օֆելյա Կամավոսյան

Հայկական խոհանոցն աշխարհում այսօր շատ ավելի բարձր դիրքում կլիներ, եթե ավանդական կերակրատեսակների գոնե կեսի պարագայում մատուցման արարողակարգը և եփման եղանակը պահպանված լինեին այնպիսի ճշգրտությամբ, ինչպիսին ավանդական հայկական խաշի դեպքում է: Այս կերակրատեսակի պատրաստման ձևը և ուտելու տարբերակը դարեր շարունակ գրեթե չեն փոխվել, այն այսօր էլ շարունակում է մնալ մարդկանց միավորելու, համախմբելու յուրօրինակ ձև: Այս կերակրատեսակը հատկապես պահանջված է ձմռանը, բայց խաշի մեծ սիրահարներն այն ճաշակում են նաև աշնան ու գարնան ամիսներին:

Խոհարար Սեդրակ Մամուլյանի խոսքերով, նախկինում խաշը մատուցվել է հատկապես հարսանիքներից հետո, այն հիմնականում դրել են տղամարդիկ, հատուկ լավ մասերը՝ պճեղները, բաժին են հանել սեղանապետին: Այս կերակրատեսակն ընդունված է եղել մեր երկրի բոլոր շրջաններում, հատկապես անասնապահությամբ զբաղվող հատվածներում: Արցախում խաշ են դրել նաև գառի ոտքերից:

Խաշի պատրաստման ընթացակարգն այնքան առանձնահատուկ է, որ ժողովուրդն անգամ երգեր է հյուսել խաշը մաքրելու և դնելու մասին: Խաշը ծախսած էներգիան վերականգնելու միջոց է, և իմաստուն ժողովուրդը դարեր ի վեր շատ հագեցած այս կերակուրը ճաշակել է հատկապես ձմռանը, երբ մարդու օրգանիզմին ավելի շատ էներգիա և ջերմություն է հարկավոր:

Խաշի նշանակությունը մեծ է գերդաստաններին իրար գլխի հավաքելու և միավորելու առումով, այն նաև յուրատեսակ ընտանեկան խորհուրդ է:

Ազգագրագետ Ռուզան Ծատուրյանի խոսքերով, ավանդական այս կերակուրը գալիս է շատ վաղուց, դրանում վառ արտահայտված են հայ մարդու ճաշակը, ազգային առանձնահատկությունները, վարքաբանությունը: Այս ուտեստի պարագայում դրսևորվում է կոլկտիվ ժողովուրդներին բնորոշ կոլեկտիվ հացկերույթը, միասնական ճաշակման արարողակարգը: Խաշի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այս կերակուրը ճաշակում են գլխավորապես առավոտյան, մատաղի արարողության նման խաշին էլ բնորոշ է զուսպ սեղանը, այս դեպքում էլ ճոխ ուտեստներ ու խնջույք չկա:

Խաշի սեղանի շուրջ՝ միայն երեք կենաց

Խաշը հարիսայի ու սպասի հետ հայկական երեք կերակրատեսակներից մեկն է, որի ժամանակ աղ չի օգտագործվում: Այն պատրաստվում է տավարի տոտիկներից, ստամոքսից և ոտքի ոսկորներից՝ զինգից: Նախկինում օգտագործվել է նաև կենդանու գլուխը: Խաշ դնելն էլ, ուտելու պես, կոլեկտիվ և ժամանակ պահանջող գործողություն է. մեկը մաքրում է, մյուսը եփում ամբողջ գիշեր: Միգուցե սա, ինչպես նաև պատրաստման բարդ ընթացակարգն են պատճառը, որ երբեք չեն ասում, թե խաշ ենք եփում՝ խաշը դնում են:

Այս ուտեստի համար նախատեսված մասերը՝ տոտիկները, ստամոքսն ու ոսկորները մանրակրկիտ մաքրվելուց, կտրատվելուց, կճղակների մասն առանձնացնելուց հետո մոտ երկու օր պահվում են հոսող ջրի տակ այնպես, ու արյունը մաքրվի: Խաշը դրել են պղնձե կաթսայի մեջ, իսկ մեր ժամանակներում կարելի է պատրաստել նաև չժանգոտվող կաթսայում: Նախևառաջ, անհրաժեշտ է մեկ անգամ եռացնել ու թափել ջուրը, և կրկին լվանալ մասերը: Խաշն սկսում են եփել երեկոյան:

Խաշի մեջ օգտագործվում են տոտիկի միսը և ոսկորների արգանակը, դրա համար էլ այս երկու բաղադրիչները պետք է եփել առանձին՝ տոտիկներն արդեն եռացրած ջրով, որպեսզի մսի մկանային հյուսվածքները տաք ջրից փակվեն, սննդային արժեք ներկայացնող մսահյութը մնա ներսում, ու միսը համով լինի, իսկ փորոտիքն ու ոսկորները՝ սառը ջրով, որ համն անցնի արգանակին:

Տոտիկները մեկ անգամ եռալուց հետո պետք է եփել շատ թույլ կրակով, առանց կափարիչի, խոհարարական տերմինով ասած՝ դամել, իսկ ոսկորները ուժեղ կրակով՝ կաթսայի կափարիչը փակ: Ոսկորից արտազատվող նյութից ջուրը դառնում է մածուցիկ արգանակ: Դանդաղ եփվող տոտիկի պակասող ջուրը ժամանակ առ ժամանակ պետք է լցվի ոսկորների արգանակից: Ընթացքում կարելի է ոսկորների վրա եռացրած ջուր ավելացնել: Կարելի է նաև այն, որ առանձնացվի ոսկորները եփելու ժամանակ զատվող յուղային մասը, որպեսզի յուղը շատ չեռա և օճառատիպ նյութ չդառնա: Ստամոքսն էլ եփվում է առանձին ամանում, 3-4 անգամ հարկ է եռացնել ու փոխել ջուրը, որպեսզի չեզոքացվեն վատ համուհոտերը:

Ափսեում մատուցվում է փորոտիքը, տոտիկները և ոսկորներից անջատված յուղը: Սեղանին հաց է, աղ, սխտոր, կանաչի, սպիտակ բողկ, պարտադիր է նաև չոր լավաշը:

Ուշագրավ է նաև այն, որ խաշի սեղանի շուրջ խմում են երեք կենաց՝ «Բարով տեսանք», «Բարի խաշ լինի» և «Խաշը դնողների համար»:

Հետաքրքիր է իմանալ նաեւ, որ

20-րդ դարի կարևորագույն հայտնագործություններից համարվող բանկոմատի առաջին նմուշը ստեղծողը մեր ամերիկահայ հայրենակից Ջորջ Սիմջյանն է, որը ծնունդով Կիլիկիայի Այնթափ քաղաքից է, որ 1915-ի կոտորածներին կորցնում է ընտանիքը, Բեյրութ – Մարսել երթուղուց հետո ի վերջո իր բախտը գտնում ԱՄՆ-ում: Նա 1935 թվականին ստեղծում է կանխիկ գումար ստացող և տվող մի սարք, որը հետագայում հեղաշրջում կատարեց բանկային գործում:

Մեր փառահեղ հայերենը

/հատված Հայկ Խաչատրյանի «Բառը չզորացրվող զինվոր է» գրքից/

Արագ և շատ օտար լեզուների կարող է տիրապետել նա, ով հրաշալի գիտի մայրենին: Կիրթ մարդ կարելի է համարել առաջին հերթին նրան, ով լավ գիտի իր մայրենին: Շատ օտար լեզուներ իմանալը արժաքի անբավ հարստություն է, ոսկի է միայն մայրենին իմանալը:

Մի անգամ անվանի լեզվաբան, էստոնիայի ԳԱ ակադեմիկոս Պաուլ Արիստեին, որ գիտե շուրջ 40 լեզու, հարցրին.

- Ձեր կարծիքով ո՞ր լեզուն է ամենագեղեցիկը:

- Միշտ մայրենին, - պատասխանեց Արիստեն:

Պետք է սովորել հայերենը, որն աշխարհի հնագույն ու հարուստ լեզուներից է:

Դեռևս 5-րդ դարում պատմիչ Եղիշեն գրել է. «Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն հզոր, հոներենը՝ ահաբեկող, ասորերենը՝ աղերսական, պարսկերենը՝ պերճ, ալաներենը՝ գեղեցկազարդ, գոթերենը՝ հեգնական, եգիպտերենը՝ տափակախոս ու խավարաձայն, հնդկերենը՝ ճռվողական, հայերենը՝ քաղցր, որը միաժամանակ կարող է մյուս բոլոր լեզուների հատկությունները ամփոփել իր մեջ»:

Եկենք պահենք, պահպանենք հազար փորձոկի մեջ թրծված մեր փառահեղ հայերենը:

Էջը կազմեց՝ Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ԳՆԵԼ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Աննախադեպ գիրք

Պատմվածքներ

Դժվար է հավատալ, թե մի հեղինակ ի վիճակի է այսքան տարողունակ գիրք գրել մեր պատերազմի մասին, մանավանդ, այսքան բազմաժանր, այսքան խորքային, այսքան իրազեկ:

Գնել Շահնազարյանին պետք են եղել գրողի եւ ժուռնալիստի ի՛ր զինանոցի բոլոր տեսակի ու տրամաչափի զենքերը, անչափ ծանր մի խնդիր հաղթահարելու համար: Իրոք, վիթխարի աշխատանք է կատարված՝ որքա՜ն ժամանակ է պետք եղել, ինչքա՜ն հանդիպումներ:

Արդյունքում ստեղծվել է եզակի, իր նմանակը չունեցող մի աշխատություն (այո՛, աշխատություն), որ իր տեսակի մեջ առաջինը լինելով, ներկայացնում է հերոսական պայքարի ոչ միայն համայնապատկերային դրվագներն ու կոմպոզիցիան, այլեւ համարյա բոլոր այն զգայական-զգացական, հոգեւոր, կամային, հուզական աննախադեպ շեշտերը, որոնք հատուկ են ժողովրդական պատերազմին: Հազարավոր մարդիկ այս գրքում կգտնեն իրենց սիրելիներին՝ զոհված եւ ապրող ազատամարտիկների: Կտեսնեն նաեւ նրանց փոխարինած նորաստեղծ բանակի զինվորին ու սպային:

Այս գիրքը մի գրողի գնահատականն է իր ժողովրդին, իր ցեղին, կնոջն ու տղամարդուն, մորը եւ զավակին՝ հայ մարդուն: Եվ այս ամենը արված է բազում հարցադրումների բացահայտման միջոցով:

Սա աննախադեպ գիրք է, դուք անպայման կհամոզվեք (որ երբեք չեմ կասկածում) կլանված ընթերցումից հետո:

Ռոմիկ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Գիրք սիրո եւ սրի

«Քաղցր մենախոսություն»

Էդիկ Բաբայանը եղբայրների՝ Գարեգինի և Հարությունի հետ անցել է պատերազմական ճանապարհներով:

– Անցել էինք թշնամու թիկունք: Առաջադրանքն արդեն կատարված էր: Պատրաստվում էինք վերադառնալ, երբ մի խենթություն մտավ մեջս, – վերհիշում է Էդիկ Բաբայանը: – Անցնում էինք փոստատան կողքով: Տղաներին հանձնարարեցի աննկատ մտնել բաց պատուհաններով, խարխլված նկուղը, իսկ ես մտա հեռագրատուն: Հեռախոսավարուհին զբաղված էր ձեռագործով: Նույն հագուստն է, նույն մազակալած դեմքերը, որոնց արդեն սովորել է ու կասկածի ոչ մի տեղիք չի տալիս: Հանդարտ մոտեցա աղջկան ու ավտոմատի փողով բոթեցի. «Միացրու Երևան»: Աղջիկը չարքահալածի պես ուզեց գոռալ, սակայն հետախույզի իմ բնազդով ավտոմատի փողն իջեցրի ու ժպտացի: Աղջիկը պապանձվեց քարացածի պես, սկսեց լսել իմ «քաղցր ու տենչալի» մենախոսությունը: Միայն դուրս գալուց նորից ցույց տվի ավտոմատի փողն ու նորից հիշեցրի, որ «լռությունը ոսկի է»: Օրն արդեն ուզում էր մթնել: Հանգիստ դուրս եկա ու պտտվելով շենքի մյուս կողմը՝ բաց պատուհանից ցատկեցի նկուղ: Որոշ ժամանակ անց իրարանցում, կրակոցներ: Զինված խմբեր էին մեկնում գյուղից դուրս, տարբեր ուղղություններով: Ստուգումներ էին կատարում տներում, սակայն ոչ մեկի մտքով չէր անցնում մտնել փոստատան նկուղ: Երբ մութը վրա հասավ ու ամեն ինչ խաղաղվեց, որոշեցինք մեկ անգամ էլ «չափել» ազերիների վախը: Ֆիզիկապես լավ պատրաստված մեր ընկերներից Գառնիկը պետք է հասներ գյուղի հակառակ ծայրը և կրակահերթ բաց թողներ գյուղի ուղղությամբ: Որոշ ժամանակ անց լսվեցին կրակոցներ, և ողջ գյուղը նորից իրար խառնվեց: Բոլոր կողմերից զինված ջոկատներ «սլացան» թեժ կռվի, կրակոցների ուղղությամբ: Ռազմաճակատային գիծը, կարելի է ասել, բաց էր: Մենք դուրս եկանք թաքստոցից ու շարժվեցինք սահմանային գիծ: Պայմանավորված տեղում սպասեցինք, և որոշ ժամանակ անց մեզ միացավ Գառնիկը: Գյուղից դեռ երկար լսվում էր աղմուկ–աղաղակ, կրակոցներ:

Մոլորված օտարականը

Դեմառղեմ հանդիպեցին անտառում: Արմենը, որին ջոկատի տղաները Ճուտո էին ասում, զգաց, որ հանդիպածը օտարական է՝ շիկահեր, խաժ աչքերով: Նա տղաներից լսել էր, որ վարձու օտարականներ են կռվում ազերիների կողմից: Օտարականը ռուսերենով դիմեց տղային. «Որտե՞ղ են ազերիները»: Ճուտոն ձեռքը մեկնե՛ց հակառակ ուղղությամբ: «Ինձ կուղեկցե՞ս նրանց մոտ, – ժպտալով հարցրեց օտարականը»: «Այո, – ասաց Արմենը, բայց ոտքս սաստիկ ցավում է»:

Երբ օտարականի թիկունքին բազմած Ճուտոն մոտեցավ յուրայիններին, սրանք զարմացած հարցրին: «Ճուտո, էս ո՞վ է»: Օտարականի թիկունքից ցատկելով Ճուտոն ծիծաղելով ասաց. «Օտարական էր, տղերք, տեղանքին անծանոթ, դե ես էլ ռուսերենին լավ չեմ տիրապետում, մի տեսեք, ի՞նչ է ուզում»:

Քարին Տակ գյուղի հրաշքը

«Անտրամաբանական հաղթանակները հրաշքով ենք տանում, որովհետեւ դրանք կապված են Աստծո երաշխիքի հետ»:
ՊԱՐԳԵՎ ՍՐԲԱԶԱՆ

1992 թ., հունվարի 26: Այդ օրը հայոց պատմության մեջ մնալու է որպես շրջադարձային Աստծո լուսավորած ճանապարհի մեծ Սկիզբ: Թերևս այդ օրն ազատագրվեցին Շուշին, Մարտակերտը, Լաչինը, դատարկվեցին Ֆիզուլին ու Աղդամը, որովհետև այդ օրը թշնամին զգաց, որ իր դեմ Աստծո բարեհաճությունը շահած թվով մի բուռ քաջարի զինվորների հոգում գերբնական ու առեղծվածային ուժ է գործում... Հունվարի 23-ի Բաքվի գաղտնի ժողովում որոշվում է, որ 26-ին պետք է հիմնատակ ավերվի Քարին Տակ գյուղը, որպեսզի կտրվի Ստեփանակերտը սնուցող միակ ուղին: Հունվարի 26-ի առավոտյան ժամը 6-ին սկսվում է անհավասար մարտը, որը բարձրախոսով Շուշիի բարձունքից ղեկավարել-ոգևորել է Ադրբեջանի պաշտպանության նախարարը: Մարտը տևում է մինչև երեկոյան ժամը 6-ը: Հազարից ավելի ասկյարներ գրոհում են գյուղի վրա տարբեր կողմերից, իսկ Շուշիի բարձունքից, որտեղից գյուղը ոնց ափի մեջ, գործում էին նշանառուները: Գյուղն ունեցել է ընդամենը 41 ավտոմատավոր, որոնք բաժանվել են երեք խմբի՝ պաշտպանելու գյուղը:

... Մի պահ թվաց, թե ամեն ինչ վերջացավ, որովհետեւ ասկյարներն արևմտյան կողմից մտան գյուղի առաջին տունը, որն այրվում էր կրակների մեջ: Տանտերը՝ կնոջ ու երեխայի հետ, այրվող տան ներքնահարկում աղոթում էր Աստծուն և իր խնայած երկու գնդակները ցույց տալով՝ կնոջն ասում է. «Վերջին պահին երեխային կրծքիդ սեղմիր, որպեսզի... գնդակները բավարարեն»: Այդ պահին ներս է մտնում թուրք զինվորը իր վայրենի քրքիջով. «Գյավո՛ւր, դուրս արի, էլ փամփուշտ չունես»: Մի գնդակով գետնին տապալելով թուրքին, տանտերը վերցնում է նրա հարուստ ռազմավարը, և նորից շարունակում է մարտը:

Մինչ այդ գյուղից ոչ մի կին ու երեխա դուրս չէր եկել: Օրհասական այդ պահին որոշում են գյուղից դուրս բերել բոլորին: Ձյան հաստ շերտը ճեղքելով՝ բնակիչները բռնում են կյանքի ճանապարհը: Իսկ Շուշիի բարձունքից ոգևորված, աղմուկ-աղաղակով գործում են թուրք նշանառուները: Դիրքերում կռվող տղամարդիկ նայում են ձյան վրա շարժվող իրենց ընտանիքի անդամներին, որոնցից մի քանիսի արյունից արդեն կարմրին էր տալիս ձյունը: Դիմացը՝ մեծաքանակ թշնամի, ներքևում՝ ձյան վրա, շարժվող կին, երեխա, վերևից՝ գործող նշանառուներ: Ինչպե՞ս օգնել՝ դուրս գալով՝ նրանք էլ կդառնային թիրախ, չհաշված, որ թշնամին գյուղ կմտներ, և ամեն ինչ կվերջանար: Եվ նրանք կռվում էին, մեկ-մեկ հետ նայում, իսկ նրանց հայացքներն ասես աղոթք էին՝ ուղղված երկինք. «Ամենակարող Աստված, մի թե այս անգամ էլ...»: Եվ այդ պահին տեղի ունեցավ Հրաշքը: Պարզ ու անամպ երկնքից սպիտակ ամպի մի քուլա եկավ ու պատեց Շուշիի բարձունքը կուրացնելով թուրք նշանառուներին: Բարձունքում

Շ13

⊃12

միանգամից կտրվեցին ազերիների վայրի քրքիջն ու աղաղակը, ժողովուրդն արդեն աննկատելի էր: Կատարված հրաշքից համրացել-հուսալքվել էր թշնամին, իսկ հայ մարտիկներն ասես գերբնական ուժ ու ոգեկորություն էին ստացել: Ասում են՝ դա տեսնելով՝ նրանց պաշտպանության նախարարը տվել է նահանջի հրամանը: Թշնամին նահանջել է՝ տալով 200-ից ավելի զոհ: Եվ դա արդյոք նահանջ էր միայն Քարին Տակի՞ց:

Ընկան նանքաջարի հայորդիներ՝ Սզնեխից, Շոշից, Սղնախից, Ավետարանոցից, Քարին Տակից՝ Վաղարշակ Առուշանյան, Հենրիկ Ամիրջանյան, Ալբերտ Աբաղյան, Արշավիր Մարգարյան, Միշա Հովհաննիսյան, Ալյոշա Վարդանյան...

Ընկան նրանք՝ տեսնելով սակայն այն մեծ հրաշքը, որը տեղի ունեցավ Արցախ աշխարհի Քարին Տակ գյուղում, 1992 թ. հունվարի 26-ին: Եվ նրանք այն բացառիկ երջանիկ նահատակներից էին, որոնք, թերևս, հենց այդ օրը տեսան նաև Շուշին, Մարտակերտը, Լաչինը ազատագրված, տեսան Ֆիզուլիից, Աղդամից փախչող ասկյարներին: Եվ երանի նրանց աչքերին, որովհետև էլի հրաշքներ տեսան, որոնք Աստծո կամեցողությամբ տրվելու են հայոց բանակի արծիվներին:

Տիրոջ գերեզմանին

Սիրուշ տատի հիշատակին

Իջևանի Սարիգյուղում ապրող քրոջս որդին հսկա մի գամփռ ուներ: Տիրոջը տեսնելիս հնազանդ խոնարհվում ու սկսում էր ուրախ թռչկոտել: Կանգնում էր ետևի ոտքերին ու թաթերը դնում նրա ուսերին: Ու սկսվում էր նրանց զրույցը՝ տերն ինչ–որ հարցեր էր տալիս, որին ի պատասխան՝ շունն իր շնային լեզվով մռռում, գռմռում ու երախը լայն բացելով տարուբերում էր գլուխը: Տնեցիներից ոչ մեկը չէր համարձակվում ջուր ու լափ տալ շանը: Երբ տերն ինչ-որ գործով պետք է բացակայեր գյուղից, շանը գցում էր փոքրիկ շինության մեջ, որտեղ երդիկից էին իջեցնում կերը: Մարտերից մեկի ժամանակ, երբ քրոջս տղան զոհվեց, հուղարկավորությունից վերադարձող մարդիկ լսեցին շան թույլ ռռնոցը, որն ավելի շատ աղիողորմ լացի էր նմանվում: Մոտ մեկ շաբաթ երդիկից իջեցրած ջուրը, լափը մնում էին տեղում: Գամփռը հյուծվել էր, նիհարել ու քույրս որոշեց նրան բաց թողնել: Շունը դուրս եկավ ու երերալով քայլեց հանդ տանող ճանապարհով: Արդեն մութն ընկել էր: Շունը քայլում էր գերեզմանոցի ուղղությամբ: Հաջորդ օրը քրոջս որդու՝ ազատամարտիկ Գնել Եգանյանի գերեզմանին այցի գնացածներս տեսանք տիրոջ գերեզմանին անշնչացած գամփռին:

Այգու պահակը

Անսպասելի հարձակումից գյուղը մեկեն դատարկվեց: Խուճապահար փախչում էին մեծ ու փոքր: Թշնամին փորձեց դիմադրել, բայց զոհեր տալով, այնպիսի արագությամբ նահանջեց, որ երևի փախչող բնակչությանն էլ անցավ: Ջոկատի հրամանատարը հանգստի հրաման տվեց.

– Խաղաղ բնակչության հետ մենք կռիվ չունենք, թող նահանջեն:

Ձորն անցնելով, երբ նրանք ուզում էին մտնել բերքից ճղակոտոր խնձորի այգին, մեկ էլ որտեղից որտեղ հայտնվեց տարեց պահակն ու հրացանը առաջ մեկնած՝ ձայն տվեց.

– Այգի չմտնեք, հենց մտաք՝ կկրակեմ: Ես եմ այգու պահակը:

Ջոկատի տղաները ծիծաղից ուշաթափվել էին, իսկ հրամանատարը, որն ադրբեջաներեն գիտեր, թարգմանում էր Ահմադի ասածը. «Երկու օր առաջ հացը կապել, եկել է պահակ ընկերոջը փոխարինելու: Էլ ոչ մի լուր չունի գյուղից, տնից-տեղից»:

– Վա՜յ, Ահմադ, Ահմադ, – ծիծաղում էին տղաները, – աշխարհից «բեխաբար» Ահմադ:

Ազատ խոսք

– Շահումյանում գերեցինք մի թուրքի: Հսկայամարմին էր, իսկական աժդահա, բայց քաղցից էնպես էր խեղճացել, կուչ եկել, որ հացի նստելիս Աբոն որոշեց նրան էլ մասնակից դարձնել, – պատմում է Աշոտը: – Սեղանին օղի էլ կար, լցրինք նաև գերու բաժակը: Ասեմ, որ գերին մինչ այդ ապրել էր Մասիսի գյուղերից մեկում և ազատ խոսում էր հայերեն: Առաջին բաժակից հետո նա մի փոքր շտկվեց, ու աչքերում կենդանության նշաններ երևացին: Երկրորդ բաժակից հետո ախորժակն էլ բա՛ցվեց ու սկսեց ուտել: Ուտելն էն խոսքը չէ՝ սեղանը սկսեց մաքրազարդել: Մենք էլ էինք քաղցած, ու Աբոն մեղավոր ինձ էր նայում: Բայց այդ ամենը դեռ ոչինչ, համբերեցինք, բայց երբ 3-րդ բաժակից հետո գերին սկսեց խոսել, Աբոն, մի կերպ ծիծաղը պահելով, վեր կացավ սեղանից: Էդ անխիղճն էլ մեզ հերթ չէր տալիս, երբ մեկնումեկն ուզում էր խոսել, ընդհատում ու ինքն էր սկսում խոսել, խոսել:

– Աբո ջան, մեզ քո գերուց ազատի, անխիղճը հացներս կերավ, խմեց, հիմա էլ խոսքի իրավունքից է զրկել, – տղաների ծիծաղը խլացրել էր գերու ձայնը, որն ինչ-որ բան էր պատմում:

Ազատություն

Երբ հասան թշնամու դիրքերին, Գևորգը զգաց, որ փամփուշտները վերջացել են: Դեն նետեց ավտոմատն ու մտավ խրամատ: Առաջին պատահած ազերին նրա սարսափազդու տեսքից վախեցած շուռ եկավ ու փորձեց փախչել: Մի ցատկով հասավ թշնամուն, բռունցքի հարվածով գետնի՝ տապալեց ու վերցնելով ավտոմատը՝ շարունակեց մարտը:

Երբ մարտն ավարտվեց, գերիների մեջ տեսավ նրան, ումից խլել էր զենքը:

– Ինչո՞ւ չկրակեցիր, – հարցրեց, – չէ՞ որ ես անզեն էի:

Գերի ազերին գլուխը կախ լռել էր քարի պես: Գևորգը հրամանատարին պատմեց եղելությունը: Քիչ անց նրանք հացի կանչեցին գերուն: Ճաշելուց հետո հրամանատարն ասաց.

– Դու ազատ ես, կարող ես գնալ: Գևորգն իմ ամենաքաջ զինվորն է, դու նրա կյանքն ես խնայել, մենք էլ՝ քոնը:

⊃10

Ջանազան-զարմանազան

ցից է: Պատերը զարդարում են սառցե քանդակները, սառցե առաստաղներից կախված են իսկական բյուրեղապակյա ջահերից չտարբերվող սառցե ջահեր: Հյուրանոց այցելողներն ասես հայտնվում են Անդերսենի «Ձյունե թագավորությունում»: Բազմագույն մեղմ լուսավորությունը, որ ասես արտածվում է սենյակների պատերից, էլ ավելի ռոմանտիկություն է հաղորդում հյուրանոցին: Հյուրանոցը բաղկացած է 60 համարից, սաունայից, ռեստորանից, կինո-թատրոնից և ցուցահանդեսի սրահից, որտեղ կարելի է հիանալ սառույցից ստեղծված արվեստի գործերով: Համարների ներսում զուգարան և լոգարան չկա. դրանք գտնվում են կից շինությունում: Համարները չունեն նաև դռներ: Հյուրերի ուղեբեռի համար հատուկ պահասենյակ կա: Հյուրանոցի ամենանշանակալից վայրը, թերևս, բարն է: Սառցե բարձր վաճառասեղանի հետևում կանգնում է բարմենը՝ վարպետորեն հյութ լցնելով սառցե բաժակների մեջ: Վաճառասեղանի մոտ, ինչպես սովորական բարերում է, բարձր աթոռներ են շարված, դարձյալ սառույցից: Սպասքը՝ ափսե-բաժակ-գավաթ, ևս սառույցից է: Սենյակների կահավորանքը՝ աթոռները, բազմոցները, մահճակալները ծածկված են եղջերվի հաստ մորթիներով. սա արված է նրա համար, որ նստելն ու պառկելը հնարավոր լինի:

Հյուրանոցի ներսի սովորական ջերմաստիճանը 5 աստիճանից ցածր է: Բայց կարող է իջնել մինչև -8-ի, եթե դրսում -45 է, այդ պատճառով հյուրերին խորհուրդ է տրվում հյուրանոցում օթևանել ընդամենը 1 օր (հյուրերը քնում են տաք քնապարկերում, առավոտյան նրանց 1 բաժակ տաք հապալասի հյութ են մատուցում): Սակայն միայն օդի ցածր ջերմաստիճանով չի պայմանավորված հյուրերի 1-օրյա բնակությունը: Բանն այն է, որ սառցե հյուրանոցում գիշերելը շատ թանկ հաճույք է: Դրա հաշվին փոխհատուցվում է ոչ միայն հյուրանոցի շինարարության ծախսը, այլև կարգին եկամուտ է ապահովվում: Սառցե հյուրանոցը ողջ աշխարհից ժամանած զբոսաշրջիկների պակաս չի զգում: Շվեդիայի սառցե հյուրանոցների համաշխարհային փառքը հանգիստ չի տալիս շատ ու շատ երկրների, որոնք նույնպես սկսել են նման հյուրանոցներ կառուցել, ինչպես, օրինակ, Նորվեգիան, Կանադան և Ռումինիան, բայց դրանք դեռևս չեն կարողացել ստվերել Շվեդիայի սառցե հյուրանոցների փառքը:

ՀԱԲԻԹԱԹ-67
(ԿԱՆԱԴԱ)

1967 թ. Կանադայում տեղի ունեցավ այն ժամանակվա ամենախոշոր համաշխարհային ցուցահանդեսներից մեկը՝ էքսպո-67-ը: Ցուցահանդեսի գլխավոր թեման տների ու բնակելի շենքերի շինարարությունն էր: Հաբիթաթ-67 անվանված շինարարության հիմքը խորանարդն է: Նյութական իմաստով խորանարդը կայունության խորհրդանիշն

⊃15

2012 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից գրքի մայրաքաղաք է հռչակվել Երևանը

2012 թ. Երևանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվել է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Տարբեր ժամանակներում գրքի մայրաքաղաքներ են հռչակվել Մադրիդը, Ալեքսանդրիան, Թուրինը, Ամստերդամը, Լյուբլյանան, Բուենոս Այրեսը:

Երևանը 2012 թ. կհռչակվի գրքի 12-րդ համաշխարհային մայրաքաղաք:

Ծրագրի մեկնարկը տրվելու է 2012 թ. ապրիլի 23-ին՝ Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օրը: Այդ օրը տեղի կունենա տիտղոսի հանդիսավոր փոխանցումը Երևանին՝ գրքի համաշխարհային ներկայիս մայրաքաղաք Բուենոս Այրեսից: Երևանն էլ իր հերթին հաջորդ տարվա նույն օրը այն կփոխանցի Բանգկոկին:

ՀՀ մշակույթի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի տեղեկացմամբ՝ երևանյան ծրագրում ներգրավվելու են գրքի կայացման բարդ շղթայի բոլոր մասնակիցները՝ գրողն ու թարգմանիչը, հրատարակիչը և գրավաճառը, գնողը, ընթերցողը և պահպանողը: Միջոցառման շրջանակում կազմակերպվելու են կոնֆերանսներ, կլոր սեղաններ և սեմինարներ:

Հատկանշական է, որ Երևանը գրքի մայրաքաղաք է հռչակվելու այն դեպքում, երբ մայրաքաղաքում ձեռքի մատների վրա կարող ենք հաշվել բոլոր գրախանութները: Գրախանութների մի մասը փակվեց ու վերածվեց կոշիկի, հագուստի սրահների, իսկ գրքերի մյուս մասը հանգրվանեց մութ ու խավար անցումներում ու Վերնիսաժում:

Թե ինչպես են պատրաստվում դիմավորել վերոնշյալ մեծ իրադարձությունը, փորձեցի զրուցել հայաստանյան հրատարակիչներից մեկի՝ «Հայդիզայն» հրատարակչության երիտասարդ գործարար Դավիթ Դովլաթյանի հետ:

- Դավիթ, խոսենք Ձեր տպագրական համալիրի նախաձեռնությունների մասին:

- «Հայդիզայն»-ը հինադրվել է 1999 թվականին՝ որդեգրելով հայկական դիզայնի ոճը պահպանելու, արտերկրում և սփյուռքում տարածելու գործելակերպը: Հայեցի տպագրության համար տարբեր ցուցահանդես-մրցույթներում արժանացել ենք լավագույն մրցանակների: Իմ կարծիքով՝ մեր հանրապետությունն անպատրաստ է Գրքի մայրաքաղաք դառնալուն, քանի որ հսկա Երևանն ունի երկու-երեք գրախանութ: Ցավալի է այն փաստը, որ, ի տարբերություն եվրոպական երկրների՝ լինելով դարավոր տպագիր մշակույթի տեր ու ժառանգորդ, ժողովուրդը սկսել է քիչ կարդալ և առնչվել գրքի հետ: Երեք միլիոն բնակչության համար ամենաշատ վաճառվող գիրքը 500 տպաքանակն ունի: Դա պայմանավորված է հասարակության մտավորական խավին անմատչելի գրքերի բարձր արժեքով: Հրատարակչությունները տպագրում են, որպեսզի ապահովեն բարձր եկամուտ գրքից, մինչդեռ այսօր ցանկացած հրատարակչություն պետք է լուրջ քայլեր կատարի՝ վերանայելով իր գնային մոտեցումը:

Մենք մեր հերթին իրականացնելու ենք բավականին ծավալուն միջոցառումներ: Նախ՝ բոլոր հրատարակիչների ջանքերը միավորելով՝ քաղաքի բոլոր տպարաններում ստեղծվելու են գրախանութներ: Պլանավորում ենք բոլոր այն խանութներում, որտեղ կցանկանան գիրք վաճառել, անվճար տեղադրել գրա-ցուցադրակներ: Գրքերը կտրամադրվեն ինքնարժեքով՝ գնորդի հետաքրքրությունը գրքին վերադարձնելու նպատակով: Նաև մտադիր ենք սկսել հայ թարգմանիչներին ոգևորելու քայլեր, որպեսզի շատանան որակյալ թարգմանությունները, այլապես՝ խիստ նվազել է գիտահանրամատչելի, դետեկտիվ հայատառ գրականության վաճառքը:



- Դուք առաջինն եք, ով վերականգնեց մանկական գրականության ընթերցումների բարի ավանդույթը: Պատմեք այդ մասին:

- Այո, և դրա նպատակը հանրության մեջ վերստին գիրք կարդալու մշակույթի վերականգնումն է: Առաջին քայլը մեր կողմից արված է, ուրախ կլինենք՝ տեսնել այլ հետևորդների: «1Պրինտ» հրատարակչության հետ համատեղ ամեն երեկո ժ. 7-ին մեր աշխատակիցը փոքրիկ հյուրերի համար կարդում է մանկական գրքեր, որից հետո երեխաներին նվիրում ենք առաջին հեքիաթի գիրքը: Այդպիսով նրանց հրավիրում ենք գրքի և հեքիաթի աշխարհ: Բոլորս էլ տարիներ հետո լավ ենք մտապահում մեր կարդացած առաջին գրքերը: Թող այն վերածվի բարի ավանդույթի, ձևավորելով գիրք նվիրելու քաղաքակիրթ մշակույթ: Երիտասարդ սերնդին թվում է, թե ինտերնետը կարող է փոխարինել գրքին, մինչդեռ համացանցում մեկ կամ մի քանի նյութ կարդալով՝ մարդը բազմակողմանի զարգացածություն չի կարող ապահովել: Առանց գրքի անհնար է վերստին ծաղկող երկիր ունենալ: Ցավալի է, որ հայատառ բեսթսելլերների բացակայությունից սովետական երիտասարդության սերունդը շարունակում է կարդալ ռուսերեն՝ ակամայից ձևավորելով օտարաբառ խոսելու սովորույթ: Այս հարցի լուծումը ճիշտ թարգմանված երկլեզու գրականություն հրատարակելու մեջ է, ինչը հնարավորություն կտա հայերենի հետ համատեղ տպագրել բնագիրը: Ցավոք, մենք չունենք սեփական պատմության ժամանակակից նկարագրողները, և մեր ցանկացած պատմական դրվագի հարուստ կենսագրություն ապահովելու դեպքում՝ կունենայինք ամենահետաքրքիր դետեկտիվներից մեկը, որը երբևէ եղել է: Ուղղակի խնդիրն այն է, որ չգնահատելով մերը՝ վերցնում և կարդում ենք արտասահմանյանը: Հայերեն գիրքը պակաս ունի լուրջ քարոզչության և տարբեր լեզուներով թարգմանության: Այսօրվա գրականությունը պետք է հիմնվի հայի ոգու ամրության, ուժի, կամքի դրսևորման նկարագիր ապահովելու, այդ մասին գրքեր հրատարակելու գործընթացի վրա: Ինտերնետում աշխատում է հզոր հակահայկական մեքենա, ում մենք պարտավոր ենք ջախջախիչ հարված հասցնել՝ «հայի կերպար» ձևավորելու համար: Թեկուզ 10 տարի անց մենք ի՞նչ հերոսապատում պիտի ցուցադրենք սերունդներին և օտարին: Համացանցը լիքն է Խոջալուի և Սումգայիթի մասին կեղծ լուրերով և հայերի կողմից «ջարդեր» կազմակերպելու տեսանկարահանումներով: Որքան էլ անկախությունն իրողություն է, սակայն վավերագիր գրականությունն է այն մնայուն արժեքը, որը կոչված է կռվան դառնալու վաղվա օրվա համար: Մենք պետք է դա այսօր նախաձեռնենք՝ ճշմարտությունը սերունդներին փոխանցելու նպատակով, քանի որ մի երկիր, փաստերը խեղաթյուրելով՝ գիշեր-ցերեկ ստեղծում է իր «պատմությունը»: Արտասահմանում մեզ չեն ճանաչում, քանի որ հայ գրականությունը լուրջ խնդիր ունի տարբեր լեզուներով դրսում ներկայացվելու: Մենք հրավիրում ենք համագործակցության թարգմանիչների, ովքեր կարող են օտար լեզուներով թարգմանել մեր հերոսամարտերի մասին: Մենք արժանի ենք հաղթանակած և հպարտ հայի պատմություն ունենալու և երեխաների մեջ սերմանելու ճշմարիտ և ուժեղ հայի հոգեբանություն:

- Խոսենք Յունեսկո-ի 2012 թ.-ի ընձեռած հնարավորությունների և ձեր դիրքորոշման մասին:

- Ըստ իս՝ Յունեսկոն 2012-ին ՀՀ-ին տվել է այդ հնարավորությունը՝ արդեն իսկ ճանաչելով որպես մտավորական ազգ, և ոչ՝ գրախանութների հարուստ ցանցով երկիր: Եթե մենք կարողանանք երկրի ներսում մեր ներքին հարցերը լուծել՝ կարող ենք դուրս գալ միջազգային ասպարեզ և պարզել մեր դրոշը: Շնորհիվ Յունեսկո-ի՝ մենք հնարավորություն ունենք աշխարհին ներկայացնելու հայի և Հայաստանի մասին, սակայն անհրաժեշտ է կատարել հետևողական քայլեր, որպեսզի լիարժեք ներկայանանք աշխարհին: Մեկ կամ մի քանի հրատարակչություններին տրամադրված միջոցները բավարար չեն, որպեսզի ներկայացվի հայ մտավորականն իր ներաշխարհով: Դրա համար մենք ամենայն ինչ անում ենք, որպեսզի գլուխներս բարձր կանգնենք «գրքի մայրաքաղաք» կոչված Երևանի հրապարակում: Եվ որպեսզի բոլոր գրողները, մտավորականները, գիրք հրատարակել ցանկացողները կարողանան տպագրել իրենց գրքերը, մենք մեր վրա ենք

➲15

➲14

վերցնում սեփական միջոցներով նրանց գրքերի հրատարակումը: Մենք կկնքենք պայմանագրեր այն հեղինակների հետ, ովքեր կանցնեն մեր կողմից կազմված ժյուրիի ցենզուրայի միջով: Մենք ճիշտ չենք համարում այն երևույթը, որ անկախությունն իր հետ բերեց ամենայն ինչ տպագրելու թույլտվություն, որից տուժեց գրքի որակը: Մենք գտնում ենք, որ տպագրված նյութը պետք է ունենա ուսուցողական և գաղափարական արժեք: Սա նորամուծություն է Հայաստանում, թեպետ այն տարածված է բոլոր զարգացած երկրներում: Բուն հրատարակչական ինստիտուտը ՀՀ-ում չեմ համարում կայացած, քանի որ տպագրում են այն, ինչ ձեռնտու է իրենց: Հրատարակչությունը պետք է անջատ գործի տպագրատնից: Հրատարակչության եկամուտը պետք է գոյանա գրքեր վաճառելուց և ոչ թե՝ հեղինակից գումար վերցնելով և սեփական տպագրատանը վաճառելով՝ հարստանալուց: Այդ է պատճառը, որ մենք մեզ վրա ենք վերցնում գրքերի տպագրությունը՝ ՀՀ-ի բոլոր մարզերի բնակիչների համար: Գիրքը վաճառելու ենք ինքնարժեք-նյութածախսով, դրանով իսկ՝ ապահովելով կարդալու արվեստը՝ գրքի հասանելիությամբ և մատչելիությամբ:

- Ի՞նչ կասեիք սփյուռքահայ ընթերցողին:

- Հայաստանից դուրս գիրք հրատարակելն այսօր հերոսություն է: Մենք համագործակցում ենք այն հրատարակչությունների հետ, ովքեր հայրենիքն ըստ արժանվույն ներկայացնում են արտերկրում: Եվ հրավիրում ենք համագործակցության համահայկական հրատարակչություններին, ովքեր կիսում են մեր գործելաոճը: Հայ մտավորականության մեծամասնությունն արտագաղթեց ոչ այն պատճառով, որ հանապազոր հացի կարիք ուներ, այլ՝ սեփական երկրում չգնահատված լինելու իրողությունից: Հիշենք, որ հայը միակ ազգն էր, ով կոտորածի ճամփին Դեր Զորում Ավետարանն էր թաքցնում և փրկում յաթաղանից: Տարիներ հետո կգա մի սերունդ, ով չի տեսնի եղեռնի սերնդին: Այսօր է պետք գրառել և փրկել նրանց հուշերը՝ կործանումից: Ցանկացած սփյուռքահայ, ով պահպանում է հայոց լեզուն և գիրը՝ հերոս է, քանի որ մեր լեզուն մեռնում է օտարամուտ բառերի խառնաշփոթից: Մենք 2012-ին սկսելու ենք արևմտահայերեն-արևելահայերեն գրքերի հրատարակչություն: Հրավիրում ենք համագործակցության սփուռքի հայությանը, քանի որ կա մի ազգի պատմություն, որին դավաճանելու իրավունք չունենք: Ճշմարիտ, գրագետ և հայրենասեր գրականությամբ կապահովենք սփյուռքին:

Հուսով եմ, որ միասին կտոնենք «Գրքի մայրաքաղաք» Երևանի տոնը և միասին կտեսնենք հայոց գրքի և գրականության հաղթարշավը:

Նաիրա ԽԱՌԱՏՅԱՆ
Երևան-Կալուգա

➲13

է, միստիկ իմաստով՝ խորհրդանշում է իմաստնությունը, ճշմարտությունն ու բարոյական կատարելությունը: Էքսպո-67-ին ներկայացված Հաբիթաթ-67-ը իրենից ներկայացնում է 354 խորանարդից բաղկացած կառույց: 146 բնակարաններով իրար վրա դարսդարսված 354 խորանարդներն ասես ճախրում են երկնի և երկրի, քաղաքի ու գետերի, կանաչի ու լույսի միջև:

ՆԱՆՅԱՆԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

(ՍԻՆԳԱՊՈՒՐ)

Արվեստների, դիզայնի ու մեդիայի Նանյանի տեխնոլոգիական համալսարանն իր սահուն ձևերով, խոտածածկ տանիքով կանաչ շինարարության կարկառուն օրինակ է, ի դեմս որի ջնջվում է բնության և ճարտարապետության միջև առկա սահմանը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, ասես ապակին, բետոնն ու մետաղական կառուցվածքը բնական լանդշաֆտի շարունակությունը լինեն:

Բարսելոնի զբոսայգում գտնվող Բանականության տունը աշխարհահռչակ ճարտարապետ Անտոնիո Գաուդիի ամենահանրահայտ աշխատանքն է: 1900թ. Յ. Գուելը Բարսելոնի արվարձանում բլուր գնեց այդտեղ անգլիական ոճի քաղաքային մասնավոր այգի ստեղծելու մտադրությամբ: Սկզբնապես զբոսայգին բաժանվել էր հողակտորների, որոնք վաճառքի պիտի դրվեին առանձնատներ ու ենթակառուցվածքների օբյեկտներ կառուցելու, ինչպես նաև հասարակական հանգստի վայրերի համար. այս վերջինով էլ պիտի զբաղվեր Գաուդին: Բայց նախագիծը ձախողվեց. այդտեղ առանձնատներ ձեռք բերելու կարողունակ բարսելոնցիները համարում էին, որ զբոսայգին շատ հեռու է քաղաքի կենտրոնից, իսկ նրանք, որոնք երազում էին քաղաքից դուրս ապրելու մասին, կարծում էին, որ տեղանքը շատ մոտ է քաղաքին: Ի վերջո Գուելի ժառանգները բլուրը վաճառեցին քաղաքային իշխանություններին, որոնք զբոսայգին հանրային հանգստավայր դարձրին: Զբոսայգու դարպասները երիզում են անուշահացե տնակները՝ սնկերով ու խաչաձև պատուհաններով: Դրանցից մեկը՝ Բանականության տունը, որ աշխարհի ամենազարմանահրաշ կառույցներից մեկն է համարվում, ասես կենդանություն առած հեքիաթ լինի: Տունը եռահարկ է, մոխրագույն ու սպիտակ գույներով և, չնայած իր չափազանց հետաքրքիր տեսքին, միջանցիկ սրահի դեր է կատարում: Տան հետևում շատրվաններով լայն սանդուղք է ձգվում՝ հասցնելով մինչև բլրի գագաթը, որտեղ մեծ սանդղավանդ է: Վերջին գործը, որ Գաուդին հասցրել է անել զբոսայգում, արահետների հանճարեղ համակարգի ստեղծումն էր. դրանք պիտի իրար կապեին ապագա կենվորների առանձնատները: Կառուցեց նաև արտասովոր, զարմանալի քարեղեն կամարներ, որոնց սյուները դեպի բլուրն են թեքվում ամենաանհնար անկյան տակ, բազմագույն խճանկարներով, մողեսաձև և օձաձև նստարաններ սարքեց:

Զբոսայգում նախագծված էր կառուցել շուրջ 70 տուն, սակայն արդյունքում կառուցվեց միայն 2-ը (այդ թվում և Բանականության տունը): Այդ տներից մեկում էլ շուրջ 20 տարի Գաուդին ապրում էր ընտանիքի հետ: Նրա մահից հետո Բանականության տունը վերածվեց հանճարեղ ճարտարապետի թանգարանի, դրանում ցուցադրվում են Գաուդիի իրերը, անավարտ նախագծերի էսքիզներ և այլն:

ԽՈՐԱՆԱՐԴԱՁԵՎ ՏՆԵՐ

(ՌՈՏԵՐԴԱՄ, ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ)

Խորանարդաձև տներ կառուցելու ինքնատիպ գաղափար հղացվեց նաև 1970-ականներին: Ճարտարապետ Փիթ Բլոմի նախագծած խորանարդաձև տները կառուցվեցին նախ Հելմոնդում, այնուհետև նա առաջարկ ստացավ Ռոտերդամից: Յուրաքանչյուր տունն աբստրակտ ծառ է հիշեցնում, իսկ այդպիսի տներով թաղամասը «անտառի» է վերածվում:



ՍՈՒՆԿ ՏՈՒՆԸ

(ՑԻՆՑԻՆԱՏԻ, ՕՀԱՅՈ)

Ճարտարապետության պրոֆեսոր և ինտերյերի դիզայներ Թերի Բրաունն իր սաների հետ Ցինցինատիի զբոսայգում այս շինությունը կառուցել է 14 տարվա ընթացքում: 2006 թ. ավարտելով՝ այն վաճառքի դրվեց 525 հազար դոլարով: Որպես շինանյութ են ծառայել ապակին, կավը, ծառերը:

ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

Ավանդապատում - մշուշով պատված խորհրդային ավանդներ:

Հրապարակախոս - հրապարակում սուտ խոստումներ տվող պատգամավոր:

Բարեփոխման ծրագրեր - երկիրը քայքայման տանող և բարիքների ուղղությունները դեպի սեփական գրպանները փոխելու ծրագրեր:

Անջրպետ - առանց ջրբաժան հարահոս ջուր:

Ապակողմնորոշել - ապահովագրական գործում կողմնորոշումից շեղել:

Ջերմոց - իրեն ջերմացնողին խայթող օձ:


Շահագրգիռ - Շահ Աբասին գրգռող գաղթական, որն ստացավ իր պատիժը:

Գալարափող - չինովնիկների կողմից գիպնոսացված փող, որը գալարվելով մտնում է իրենց իսկ գրպանը:

Անկախ - անկանխատեսելի հանրապետություն:

Գենետիկ - պապերից ժառանգած գինու տիկ:

Բառերը նորովի ընթերցեց Սպարտակ ՄԱԹՈՍՅԱՆԸ



«Я как будто взвалил на свои плечи всю Армению»

В ноябре 1999 года скончался 131-й Католикос ГАРЕГИН I — харизматичный интеллектуал. В ближайшем будущем исполнится 80 лет со дня его рождения. Он был истинным духовным пастырем армян недолго — менее пяти лет, однако остался не только в истории, но и в благодарной народной памяти. (Не в последнюю очередь потому, что в «Бентли» он не разъезжал...). Гарегин I прошел славный иерархический путь.

В 1969 году рукоположен в сан епископа, был архиепископом ирано-индийской и североамериканской епархий, наконец, на протяжении двенадцати лет — Киликийским Католикосом. Он был хорошо известен как крупный деятель всемирного экуменического движения. С Гарегином I — умным и высокообразованным человеком — не раз подолгу беседовал итальянский историк, исследователь Восточного христианства и писатель Джованни ГУАЙТА, посвятивший Армении несколько замечательных книг. Беседы с Гарегином I легли в основу одной из них. «Жизнь человека: встреча неба и земли». Она вышла в последний год жизни Католикоса и недавно вновь переиздана. Предлагаем отрывки из их бесед — мудрость, которой полнится каждая строка, не устаревает и актуальна всегда. И особенно в наши дни.

— Какой грех, по-вашему, самый тяжелый? Раньше таковыми считались грехи, относящиеся к сфере чувственной, сексуальной жизни...

— Я смотрю на это иначе. Думаю, что наиболее тяжкий грех — это равнодушие, апатия, бесчувствие, потому что он является отрицанием самого человека.

В нашей Церкви в списке грехов перечисляются грехи смертные и простительные... Но в Евангелии сказано, что не прощается грех против Святого Духа. Это случается, когда из-за своей личной закрытости люди не принимают Святого Духа, не вслушиваются в Его повеления. Именно этот смысл я вкладываю в слово «равнодушие». В проповедях я часто повторяю: Церковь провозгласила семь смертных грехов, но есть еще один — грех равнодушия! Человек замыкается в самом себе, он не хочет открыться Богу и поэтому не может открыться людям, участвовать в их жизни. Бог является Богом вовлеченности, участия; Воплощение — это вовлеченность Бога в человеческую жизнь. Поэтому человек, не участвующий в жизни других людей, отвергает само основание христианской веры — вовлеченность, основанную на любви.

— Каким был самый радостный день в вашей жизни?

— Нелегко сделать выбор... Тем не менее я бы назвал два дня. Первым был день, когда я в возрасте двадцати лет посвятил себя служению Богу. Я помню, когда поднялся на коленях к алтарю, как этого требует наш армянский обряд. В этот момент я испытал самую большую радость: у меня было чувство, что моя личность как индивидуума изменилась, преобразовалась в слугу человечества, слугу нашего армянского народа, который является частью человеческой семьи. Это был самый значительный и самый радостный день в моей жизни. Вторым стал день, когда Армения стала свободной, независимой страной. Я говорю об этом не из узконационалистических чувств... Вы должны это понять в контексте моей жизни, отданной на служение народу и полностью прожитой в диаспоре. После стольких веков подчинения другим властям, после того, что мы называем «игом», давившим на наш народ, когда у нас не было своей страны, которой бы мы руководили сами, а наша Церковь была подчинена тирании коммунизма и советской системе... После всего этого в день, когда Армения провозгласила свою независимость, я пережил совершенно особую, ни с чем не сравнимую радость. Мы — армянская диаспора — жили за пределами нашей страны не по своей воле, нас к этому принудили... В тот день я сказал себе: сбылась мечта моих предков! Поэтому этот день был для меня как армянина самым радостным.

— А самый печальный день?

— Самым печальным был день, когда мы неожиданно потеряли Киликийского Католикоса Зареха I. Когда я увидел его больного, с сердечным приступом, в его сорок восемь лет, я пережил что-то вроде бунта. Я не мог понять, почему такой человек должен уйти из жизни. Он был для меня примером перед Богом, примером преданности, самоотверженности, доброты. За одну неделю — после его смерти и похорон — я похудел на семь килограммов... Без сомнения, это был самый печальный день.

— Во вступительной речи во время вашей интронизации в Эчмиадзине вы сказали: «Я сын диаспоры. Я не родился на родине, но родина родилась во мне». Где вы родились?

— Я родился в Кессабе. Это армянская деревня, расположенная в сельском районе Сирии, вдали от больших городов, непосредственно на границе с Турцией. Материально моя семья жила достаточно скромно. До 13 лет я не знал, что такое электричество. Перед моим детским взором прошли картины деревенской жизни — земля, сельскохозяйственные работы, школа, церковь, которая была настоящим центром деревни: колокольня задавала ритм всей жизни. Наш дом находился рядом с церковью, и лишь маленькая улочка разделяла их. Поэтому соседство с Церковью в моем детстве носило не только духовный характер... Мой дед был сапожником. У отца не было определенной профессии, и он несколько раз менял место работы. В деревне он работал кучером в приюте немецкой «Миссии Востока», которую основал великий филантроп Иоанн Лепсиус. Затем он работал в нашем деревенском клубе, а также в Триполи, в Ливане. Дедушка с бабушкой по материнской линии были земледельцами. Они не владели большими угодьями, но дед упорно трудился и так зарабатывал на жизнь.

— В проповеди в Принстонском университете в Нью-Джерси, объясняя слова Иисуса о старых мехах и новом вине, вы сказали, что хорошо знали и пользовались мехами вашего дедушки... Что осталось в вас от детства, проведенного в деревне?

